ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I



9(47.925)
Ο-78
հշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I

6314

ԵՐԵՎԱՆ - 1997

ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ
ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՎ 1

ԳԵՈՐԳ ԲՐԱՆԴԵՍ - «Հայաստանը և Եվրոպան»

ԷԴՈՒԱՐԴ ԲԵՌՆՇՏԱՅՆ - «Հայերի տառապանքն ու Եվրոպան»

ՍԵՐԳԵՅ ՍԱԶՈՆՈՎ - «Հայկական բարենորոգումների հարցը»

Խմբագիր՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԳԵՈՐԳ ԲՐԱՆԴԵՍ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ

Դանիացի նշանավոր գրաքննադատ և հրապարակախոս ԳԵՈՐԳ ԲՐԱՆԴԵՍԸ (1842-1927) այս դասախոսությունը կարդացել է Բեռլինում, 1903 թ. փետրվարի 2-ին «Եվրոպայի հայ ուսանողական միության» կազմակերպած հավաքույթի ժամանակ:
Դասախոսությունն առանձին գրքույկով լույս է տեսել արևմտահայերեն, Ժնևում՝ 1907-ին «Դրոշակ» թերթի խմբագրության հրատարակությամբ: Այն բացառիկ փաստաթուղթ է Հայոց եղեռնի մասին:

Տիկնայք և պարոնայք

Հանգամանքների բերումով «Եվրոպայի հայ ուսանողական միության» կողմից հրավիրված լինելու պատիվն ունեմ՝ այս երեկո ձեր առջև ելույթ ունենալու համար, իբրև մեկը եվրոպացի այն գրողներից, ովքեր առաջինն իրենց ձայնը բարձրացրին ի նպաստ հայերի և ձգտեցին ուշադրություն հրավիրել նորագույն ժամանակների ամենից ահռելի ու քստմնելի ողբերգությունների վրա:

Մտադիր չեմ այստեղ գրողիս խոսքերին մեծ տեղ հատկացնել՝ քաջ գիտակցելով, որ քաղաքական լուրջ հարցերում վերջին խոսքը պատկանում է իշխանության գլուխ կանգնածներին: Սակայն նրանք նույնպես ստիպված են լինում հարգել հասարակական կարծիքը, երբ այն հզոր ու միասնական է: Եվ ահա դրա համար էլ հարկավոր է բոլոր երկրներում և մասնավորապես գերմանական կայսրության մեջ, հիմնավորել ու ամրապնդել հասարակական այդ կարծիքը:

Դուք բոլորդ գիտեք, թե վերջին տասը տարիների ընթացքում Արևմտյան Հայաստանը ինչպիսի սոսկումների ասպարեզ դարձավ և որ նույնիսկ ամենաբարբարոս ժամանակների պատմության մեջ նմանը չենք կարող գտնել:

Անկարելի էր հավատալ, քանի դեռ չէինք տեսել մի ամբողջ ժողովրդի այդօրինակ բնաջնջումը, համատարած կոտորածներն ու նահատակությունը:

Հարյուր հազարավոր զոհերի արյունն է, որ օգնության է կանչում:

Գիտեմ, որ Թուրքիան Գերմանիայի բարեկամ տերություններից մեկն է, և, ճիշտն ասած, այս է պատճառներից մեկը, որ թուրքական կառավարությունը երես առավ իր ուզածն անելու գործում:

Սուլթանի անձի մասին չեմ ուզում որևէ բան ասել: Բայց նրան ցնծություն պատճառող բարեկամությունը մարդկության պաշտպաններին չպետք է արգելի խոսելու գերմանացիների ներկայությամբ:

Հունգարիան ազգային և ավանդական կապերով վաղուց ի վեր կապված է Թուրքիայի հետ, սակայն, այդուհանդերձ, հետաքրքրություն ցուցաբերեց հայ

դատի ազնիվ մաքառողի՝ Պիեռ Քյառի հանդեպ, երբ վերջինս անցյալ դեկտեմբերին, Բուդապեշտում խոսեց Հայաստանի պատմության նորագույն դեպքերի մասին:

Գերմանական ժողովուրդն ավելի թույլ ազգակցական կապեր ունի Թուրքիայի հետ և անհամեմատ ավելի զորեղ է, այնպես որ, Գերմանիայում հասարակական կարծիքի ստեղծումը հայկական դատին օգնելու տեսակետից այժմ թերևս կարող է վճռական նշանակություն ունենալ:

Եթե հայերի բաժինը միմիայն թշվառությունը լիներ, մենք դարձյալ չպիտի զլանայինք նրանց նկատմամբ դրսևորելու մեր համակրանքը:

Նրանց տանջանքներն անսահման են, նկարագրելը կամ պատմելն անհնար է, որովհետև լսողները պիտի փակեն իրենց ականջները:

Եթե ասվի, թե երեք հարյուր հազար մարդ ոչնչացվեց բռնության, ցրտի ու սովի պատճառով՝ շատ թեթև տպավորություն կթողնի, և ձեր երևակայությունը չի շարժի:

Օրինակ, ինչ օգուտ, եթե ասենք, թե 1894-ի օգոստոսին Մուշի շրջակա գյուղերում տեղի ունեցած համատարած կոտորածը տևեց երեք շաբաթ, որ այնտեղ անխտիր կոտորեցին տղամարդկանց, կանանց, երեխաներին, որ կանայք սպանվելուց առաջ լլկվեցին, որ հարյուրավոր կանայք սրին ու սվիններին զոհ դառնալուց առաջ զինվորներին հանձնվեցին:

Ինչ միտք ունի ձեզ պատմել այն մասին, թե գերմանացի մի ճանապարհորդ Քենտրանցում տեղեկացել էր հինգ տարեկանից բարձր իգական ամբողջ սեռը պղծելու՝ քրդերի երդման մասին:

Մեկ ուրիշ տեղում 60 կին ու աղջիկ հանձնվեցին զինվորներին, փակվեցին մի եկեղեցում և, ի վերջո, սպանվեցին նույն զինվորների կողմից. եկեղեցու դռան տակից արյունը ջրի նման հոսում էր:

Եթե ցանկանանք անջնջելի տպավորություն ստեղծել, պետք է խորանանք մանրամասների մեջ:

Մարդ արարածը գուցե այնքան չզարմանա, երբ լսի, թե հարյուր հազարավորներ են սպանվել, սակայն կսահմռկի, երբ իմանա նրանցից մեկի ինչպես սպանվելու մասին:

Հղի մի կին զորքի առաջ ծնկի եկած աղերսում էր, որ խնայեն իրեն:

- Տղա՞ է, թե աղջիկ,- գոռացին զինվորները: Եվ ասացին, որ տղա է, և յոթ մեջիդիեով՝ գրազ եկան:- Տեսնենք՝ ո՞րն է,- ասացին ու թշվառ կնոջ արգանդը ճեղքեցին: Ով պատմում է այս տեսարանը, կարող է դեպքի մանրամասները նկարագրել ու վկաների անունները տալ:

Մի այլ տեղում քրդերը գրազ բռնեցին, թե ով կարող է մեկ հարվածով չորս երեխայի գլուխ թռցնել: Եվ նրանք երեխաներին մորթեցին մայրերի աչքի առաջ:

Տրապիզոնում կոտորածի առաջին օրը մի հայ դուրս է գալիս հացագործի խանութից, ուր գնացել էր իր հիվանդ կնոջ ու զավակների համար հաց գնելու: Հանկարծ վրա է հասնում մոլեգին մի խումբ: Մարդը խնդրում է բարեհաճ վերաբերմունք և, հավատալով խառնամբոխի խոստումներին, ցանկանում է գնալ, սակայն, լկտիաբար հեգնելով, բռնում են խեղճին, կապում ոտքերը, կտրում են մի ձեռքը և դրանով խփում դեմքին: Հետո կտրում են մյուս ձեռքն ու հրամայում, որ խաչ հանի, իսկ մյուսներն էլ հորդորում են բարձր գոռալ, որպեսզի Աստված կարողանա լսել նրա պաղատանքները: Ոճրագործներից մեկը կտրում է նրա ականջներն ու խոթում բերանը, հետո շպրտում երեսին: Մեկ ուրիշը գոռում է. «Էֆենդիի բերանը, որ արհամարհեց այդպիսի համեղ կերակուրը, պետք է

* *Մեջիդիեն քսան դուրուշի արժողությամբ արծաթյա դրամ էր Թուրքիայում:*

պատժվի»: Կտրում են լեզուն, որպեսզի այլևս չկարողանա հայհոյել: Դաշույնի ծայրով հանում աչքը, այնպես որ դեմքի զարհուրելի կծկումները, թույլ մարմնի ջղացնցումները, արյան տեսքն ավելի ու ավելի են գազանացնում մոլեռանդներին: Հետո փորում են մյուս աչքն էլ և ոտքերն էլ կտրում են մահացու հարված հասցնելուց առաջ:

(Շատ տիկիններ հեծկլտում են, ոմանք ոտքի են կանգնում, իսկ ոմանք էլ սրահից դուրս են գալիս):

Էրզրումի անգլիական հյուպատոսի տեղեկագրում նկարագրված է մի տեսարան, որ տեղի է ունեցել Սեմալ գյուղում, կոտորածները դեռ չսկսած: Հայ Ազոն մերժել էր մատնել գյուղի նշանավոր բնակիչներից մի քանիսին: Դատավոր Թալիպ էֆենդին և երկու թուրք հարյուրապետներ ամբողջ գիշերը չարչարել են տալիս նրան: Մի լավ գանահարելուց հետո մերկ թևերը տարածում են գերանի վրա, կապում ու սկսում են մտրակահարել: Թշվառը բոլորովին չէր կարող շարժվել: Դեմքի կծկումները մատնում էին նրա տառապանքները: Քանի գոռում է, այնքան ավելի են խփում, և նա պաղատում է դահիճներին, որ սպանեն իրեն: Փորձում է գանգը խփել գերաններին ու փշրել, արգելում են, որովհետև նա չէր ցանկանում յուրայինների դեմ սուտ վկայություն տալ և ոչ էլ անմեղ արյան տակ մտնել: Թալիպը աքցանով նախ նրա մորուքի մազերն է փետել տալիս, հետո հրամայում է շիկացած երկաթով դաղել ձեռքերը, երեսը, մարմինը և կարմրած ունելիով այրել լեզուն: Նա երեք անգամ ուշագնաց է լինում, սակայն անհողդողդ է մնում:

Կողքի սենյակում կինն ու զավակները սարսափած հետևում էին նրա տանջանքներին:

Հապա բանտում արգելափակվածնե՞րը: Բիթլիսում հարյուրավոր խեղճ բանտարկյալներ, որոնք գարշելի աղտեղության պատճառով հաճախ ոչ կարողանում են պառկել, ոչ նստել, լցվում են իրար վրա: Բավական չէ, որ նրանք սովահար էին, շատ անգամ էլ տանջանքների էին ենթարկվում:

Բիթլիսում երևելի հայերից մեկին՝ Համբարձում Բոյաջյանին, մութ ու խոնավ զնդան նետեցին, ձեռքերն ու ոտքերը ծանր շղթաներ գցեցին: Նրան սոված թողնելով՝ ձգտում էին խոստովանություն ստորագրել տալ, որ իբր ինքը կաշառվել է անգլիական կառավարության կողմից: Բայց որովհետև համառությամբ մերժում էր, 10 կիլոգրամանոց մի գունդ անցկացրեցին վիզը և սկսեցին մտրակահարել նրան: Հետո բանտախցի հատակի վրա սրածայր գամեր խփեցին և վրայով այքան քաշկռտեցին, մինչև որ նա հանգավ:

Գիտեմ, զգում եմ, որ ակամա նայում եք ինձ: Զսպում եք ձեզ, որ չգոռաք: Բավական է: Տեսա, որ շատ տիկիններ թողեցին սրահը և դուրս ելան: Սարսափելի է այս պատմությունները լսելը: Բայց դուք բյուրապատկեք այն, ինչ որ ձեզ պարզորոշ ներկայացրի, և խոստովանեք՝ Բեռլինի տիկինները ինչ որ չեն կարող լսել, հայերը դրա հարյուրապատիկը կրեցին:

Այս բոլորը վերջին տասնամյակում, մեր օրերում պատահած դեպքեր են, սրանից չորս-հինգ տարի առաջ: Եվ մենք թույլ տվեցինք, որ դրանք կատարվեն, ու ոչինչ չարեցինք արգելելու համար:

Եվրոպացիներից շատերին հայտնի էր այս ամենը: Սասունի կոտորածների նախապատրաստությունները այնքան բացեիբաց կազմակերպվեցին, որ էրզրումի անգլիական հյուպատոսը մի ծավալուն տեղեկագրով հայերի պաշտպանությունն էր խնդրում: Բայց Անգլիան չէր ցանկացել «բարեկամ մի տերության գործերին խառնվել»- ահա ընդունված բանաձևը:

Ամենատարօրինակն այն է, որ այս ողբալի վիճակն այսօր էլ շարունակվում

է, և Եվրոպան այլևս չի կարող արդարանալ, թե այդ մասին չգիտե: Հայերը միշտ զրկված են եղել իրենց ազատությունից, նրանք կողոպտվում են, տանջվում և կոտորվում մեկ-մեկ կամ խմբովին:

Կարող եմ հազարավոր օրինակներ հիշել: Ահա դրանցից մեկը:

1900 թվականի հուլիսի 3-ին 500 քրդեր պաշարեցին, ապա հարձակվեցին Սպաղանք գյուղի վրա: Կանայք ու մանուկները լացով ու պաղատանքով զորքերին ընդառաջ գնացին: Բայց փոքրիկ երեխաները ողջ-ողջ սվիններին բարձրացվեցին, իսկ կանանց մերկացնելուց ու անպատվելուց հետո սպանեցին: Գյուղի ութսունամյա ծերունի քահանայի բերանը ճեղքեցին և ծնոտը պոկեցին: Գյուղի տանուտերի հղի կնոջ՝ Թիմենեի արգանդը բացեցին և երեխային կտրատեցին, իսկ մորը դաշույնի հիսուն հարվածով ծակծկեցին:

Մենք վաղուց ի վեր գիտենք, որ մեր քաղաքակրթությունը դեռևս չի վերացրել անհատական ոճիրը, գողությունն ու ավազակությունը: Ցավում ենք այս երևույթների համար, բայց դրանք չէին դիպչում բարձրագույն քաղաքակրթությանը, որին, թվում է, թե հասել ենք:

Մենք վաղուց ի վեր գիտենք, որ մշակույթը, նույնիսկ ամենաառաջադեմ պետությունների մեջ, չի կարող վերացնել հասարակական թշվառությունը, աղքատությունն ու լքումը: Եվ կարծում ենք, որ նույնիսկ ամենաթշվառների կարիքը համատեղելի է մեր այժմյան քաղաքակրթության բարձր մակարդակի հետ:

Նույնիսկ պատերազմը չի կարող հակասել քաղաքակրթության ամենաբարձր աստիճանին գտնվելու մեր համոզմունքին: Որքան էլ պարտավորված լինենք հաշտվելու բազմաթիվ ոճիրների, հասարակական անարդարության ու անգթության, ազգային ու կրոնական ատելության և պատերազմի արհավիրքների հետ, միշտ կլինեն այնպիսի չարագործներ, որոնց, իբրև անցյալի ու միջնադարի մնացուկներ, մեր օրերի համար անհասկանալի կհամարենք: Սակայն այսուհետև այլևս այդպես մտածելու իրավունք չունենք: Այն օրվանից, երբ Եվրոպան չարգելեց Հայաստանում կատարվող պղծությունները, և որոնք այժմ կրկնվում են Մակեդոնիայում, դժվար է հավատալ, թե մեր դարը պատմության այն մռայլ դարերից բարձր լինի:

1848-ին թվում էր, թե դարը վճռականորեն թևակոխում է մի նոր շրջան և որ երկրորդ դարակեսը պիտի նվիրվեր ժամանակակից կնճռոտ ու նուրբ հարցերին, այն է՝ անհատի և մարդկության դաստիարակությանը:

Ազգային վեհապետության, ժողովուրդների ինքնավարության, ազգերի ու անհատների անձեռնմխելիության, մամուլի, կրոնի, մտքի, խոսքի ու միությունների ազատության հնամաշ ու ծեծված հարցերը մեկընդմիշտ լուծված էին թվում, այնպես որ, այդ մասին անգամ խոսք չպիտի լիներ:

Եվ հիսուն տարի անց Ռուսաստանում դեռևս 130 միլիոն մարդ իրավունք չունի գիրք և թերթ կարդալու, եթե իրենց խնամակալները չթույլատրեն: Եվ միմիայն այն իրողությունը, որ այնտեղ միլիոնավոր մարդիկ համակերպվում են իրերի նման վիճակի հետ, վհատեցնում է Եվրոպայի կեսին:

Հենց մեր շուրջը ազգերը դեռ հարստահարվում են, ամենակարկառուն գլուխները դեռ զբաղվում են դավանանքի ու ազգայնական հնացած հարցերով, որոնց մասին ոչ մեկը այլևս չի կարող նոր ու խելացի բան ասել: Եվ այս խնդիրները դեռևս խանդավառություն են արթնացնում, մեջտեղ հանում հերոսներ ու դավաճաններ, առիթ տալիս սխրագործությունների, մի բան, որը հարյուր տարի առաջ հասկանալի էր: Եվ դրանք են պատճառ դառնում թշվառությունների ու սարսափների, որոնք միջնադարում արդեն պետք է վերացած լիներին:

Քանի դեռ ամենակարևոր խնդիրները սպասում են իրենց լուծմանը, ներկա սերնդի միտքն ու կյանքը անիմաստ վատնվում է բոլորովին անպետք ու հազար անգամ ծեծված հարցերի վրա:

Ասում եմ, որ եթե հայերը միմիայն իրենց այս դժբախտությունն ունենային, դարձյալ արժանի էին մեր կարեկցությանն ու օգնությանը:

Սակայն հայերը քաղաքակիրթ ժողովուրդ են, հողագնդի հնագույն ազգերից մեկը, նրանք մոտ 4000 տարվա պատմություն ունեն և թե՛ իրենց երկրում, թե՛ իրենց երկրից դուրս քաղաքակրթությանը մեծ ծառայություններ են մատուցել: Հայաստանը հիշեցնում է Շվեյցարիան, նրա ժողովրդի ճակատագիրը հիշեցնում է լեհերի ճակատագիրը: Հայաստանը Փոքր Ասիայի Շվեյցարիան է, մի լեռնոտ երկիր, որը ծնում է ազատության սիրահար մարդիկ: Այն Արարատյան երկիրն է, որի վրա իշխում է ծյունապատ և վեհափառ Մասիսը, այն երկիրն է մեծամեծ լճերի և անհամար վճիտ ու սառնորակ աղբյուրների, որոնք ժայթքում են ամեն կողմից և հոսում վտակ-վտակ: Ամենուր առուներ կան, որոնք պոռթկալով ժայռերի խոր ծերպերից՝ հոսում են դեպի գետերը:

Այնտեղ կան ընդարձակ արոտավայրեր, ցորենի հարուստ դաշտեր, բերքառատ այգիներ, խնձորենիներ, տանձենիներ, նռենիներ:

Ամեն կողմից լսվում է սոխակների դայլայլը, փասիանն ու սիրամարգը թռչկոտում ու ճեմում են արևի տակ: Անտառներում ու մարգագետիններում երևում են գեղեցիկ վիթեր, լեռների լանջերին ցատկոտում են վայրի այծյամները, իսկ գյուղերի շուրջը թափառում են գայլերն ու շնագայլերը:

Ինչպես լեհերը, այնպես էլ հայերն ու Հայաստանը բաժանված են երեք տերությունների՝ Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Բացի մայրենի լեզվից, կրթված հայերը գիտեն տիրապետող երեք ազգերի լեզուները և, ընդհանրապես, հասկանում ու գրում են եվրոպական որևէ լեզվով:

Արևելքի բոլոր ժողովուրդների մեջ հայերը Եվրոպային ամենից մոտ կանգնած ժողովուրդն են և, ինչպես ասում են, Ասիայում եվրոպական քաղաքակրթության առաջապահն են:

Թեպետ նրանց երկիրը, Ասիայի աշխարհակալ ժողովուրդների արշավանքների ճանապարհին գտնվելով, շարունակ ոտնակոխ է եղել և ընկել օտարների, ինչպես՝ ասորեստանցիների, մարերի, արաբների լծի տակ, բայց միշտ ցուցաբերել է արտակարգ տոկունություն, ինչպես նաև տիրապետող հսկայական ուժ:

Պարթև թագավորները, որոնք քրիստոնեությունից առաջ թագավորեցին Հայաստանում, հայացան: Բագրատունյաց թագավորները, որոնք հաջորդեցին պարթևներին, հնարավոր է, որ հայացած հրեաներ լինեն, սակայն նրանց ծագումը պատմականորեն չի ապացուցված:

Հին ժամանակներից մինչև օրս Հայաստանը օտար ազգերին տվել է նշանավոր մարդիկ: Բյուզանդական կայսրության մեջ հայերը երևելի զինվորականներ և իմաստուն բարեհորոգիչներ էին, նույնիսկ եղել են բյուզանդական տասներկու հայազգի կայսրեր:

Թուրքական կայսրության մեջ հայերն իրենց դիրքերը պահեցին իբրև առաջադիմություն սիրող տարր. վաճառականությունը նրանց ձեռքն էր, նրանք նշանավոր էին նաև իբրև արվեստագետներ ու պետական գործիչներ: Նուբար Փաշան, որը կառավարեց Եգիպտոսը, հայ էր, ռուս դիկտատոր Լորիս Մելիքովը նույնպես հայ էր:

Հայ ժողովուրդը, քրիստոնեությունը ընդունողներից առաջինը լինելով, իր հին հեթանոսական բանաստեղծությունը դժբախտաբար մեծ մասամբ կորցրել է:

6314

Այն ժամանակ քարուքանդ արեցին ոչ միայն հին տաճարները, այլ նաև ոչնչացրին գրավոր ստեղծագործությունները, որոնք փառաբանում էին աստվածներին ու հերոսներին, որոնք հայ ժողովրդի քնարերգակ ոգու վկաներն են և հրաշակերտում են հայ աստվածությունների պանթեոնը:

Այդ աստվածները չունեն ոչ ասիական աստվածների հսկայությունը, ոչ էլ հունական աստվածների շնորհալիությունը. նրանք իրենց ստեղծագործ ժողովրդի պես աշխատասեր, ողջամիտ ու բարի են:

Երկրի հին ճարտարապետության մեջ, որը շատ հարուստ էր, նմանապես գտնում ենք արևելաարևմտյան միևնույն դիմագիծը և ասորական ու պարթևական միահյուսվածքը հունական ոճի հետ:

Քրիստոնեությունը հայերի համար մշակույթի մի նոր տարր եղավ, նույնիսկ՝ ազգային տարր:

Երբ Հայաստանը կորցրեց իր քաղաքական անկախությունը, եկեղեցին ազգային ավանդության խորհրդանիշն ու պահապանը եղավ, ինչպես որ ապագայում նույնը պիտի լիներ Լեհաստանի համար:

Այն ժամանակ գրականությունը մասամբ պատմական, իսկ հիմնականում եկեղեցական ուղղվածություն ստացավ, որը բաղկացած էր կրոնական երանգ ունեցող քրոնիկոններից և միստիկական գործերից, բայց իր մեջ պահում էր բնորոշ և մանավանդ մելամաղձոտ բանաստեղծություններ: Օրինակ՝ կան լույսին ուղղված գեղեցիկ օրհներգեր, բանաստեղծական ավյունով լեցուն պատմական զրույցներ Մովսես Խորենացու մոտ, որն իր ուսումն ստացել էր Հունաստանում և ծանոթ էր «Իլիականին»: Հայ պատմագիրը պանծացնում է հերոսական քաջագործությունները, սիրում է իր երկիրը, գովաբանում Վասպուրականի հրաշալի գեղեցկությունը, ուր Շամիրամ թագուհին իր համար հանգստավայր հիմնեց:

- Պետք է,- ասում է Շամիրամը,- այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինենք, որպեսզի տարվա շրջանի մի չորրորդ մասը, այսինքն ամառային եղանակը, ամենատեսակ վայելչությամբ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը, օդի զով ժամանակը, կյանք վայելենք Նինվեում:

Մեկ ուրիշ պատմագիր՝ Եղիշեն, որ նկարագրել է Վարդանանց պատերազմը, հիացմունքով գովերգում է հայ կանանց, որոնք բոլոր ժամանակներում բացառիկ արիություն են ցուցաբերել: Եվ դեռ վերջերս Սասունում հիսուն հայ կին նետվեցին անդունդը, որպեսզի չընկնեն թուրքերի ձեռքը: Եվ այդ նույն պատճառով Բալուում երեսուն կին խեղդվեց Եփրատի մեջ՝ սաղմոս երգելով: Եղիշեն նաև նկարագրել է պատերազմի ժամանակ հայ կանանց առաքինությունն ու անձնուրացությունը:

Վարդապետ Լաստիվերտցին, որ պատմում է թաթարների և պարսիկների արշավանքների մասին, իր քրոնիկոններում նկարագրում է 900 տարի առաջվա Հայաստանը այսպես. «... մերկ, ճանապարհի եզերքին ընկած, բոլոր ժողովուրդների կողմից ոտնակոխ, տնանկ և գերի»:

15-ից 19-րդ դարերի ընթացքում հայկական ազգային ոգին բոլորովին խորտակված, գրեթե ոչնչացված էր:

Միայն եկեղեցին էր կանգուն: Հին ձեռագրերը նիրհում էին մենաստաններում: Մխիթար աբեղան, հասկանալով, որ անհնար է Թուրքիայում հայ ազգի համար մտավոր որևէ օջախ ստեղծել, ամենաթանկագին ձեռագրերն առավ ու Վենետիկ տարավ: Այնտեղ նա հիմնեց Ս. Ղազար վանքը, որը յուրատեսակ հայկական համալսարան էր: Այնտեղ լորդ Բայրոնը սկսեց սովորել հայոց լեզուն: Ս. Ղազարի վանականները մեծ գործունեություն ծավալեցին որպես թարգմանիչներ և այդպիսով իրենց հայրենակիցներին ծանոթացրին հին և նորագույն Եվրոպայի գրական գանձերին, Հոմերոսից մինչև Շիլլեր՝ ընդհուպ մինչև Ռասին ու Ալֆրեդի:

Այդ ժամանակվանից գրականության մեջ գրաբարի փոխարեն սկսվում է գործածվել աշխարհաբարը, որի հետևանքը եղավ 19-րդ դարի հայ մշակութային կյանքի հոյակապ ծաղկափթթումը:

Եվրոպայից վերադարձող երիտասարդները իրենց հետ տարան եվրոպական քաղաքակրթությունը և հիմնեցին պարբերական հրատարակություններ, դպրոցներ ու ազգային թատրոն:

Հայ ազգային ոգին շարունակեց հետզհետե եվրոպականանալ: Կովկասում ռուս ազատական գրականության և գերմանական հրապարակախոսության ազդեցությամբ ծնունդ առավ հայ նոր գրականությունը: 19-րդ դարի կեսի եղերերգակ բանաստեղծ Խաչատուր Աբովյանը, որի տաղերում երբեմն փայլում է ֆրանսիական հեղափոխության դաշույնի ցոլքը, իր «Վերք Հայաստանի» արձակ գրվածքով հայ վիպասանության հիմքը դրեց: Նալբանդյանը հայ ժողովրդին տվեց ազատության իր երգերը: Տաղանդավոր հրապարակախոսներ, ինչպես՝ Նազարյանցը, Արծրունին և թատերագիրներ, ինչպես՝ Սունդուկյանցը, խստորեն քննադատեցին իրենց հայրենակիցների նախապաշարումները: Ռաֆայել Պատկանյանն իր ազատաշունչ երգերով դարագլուխ կազմեց: Տաղանդավոր գրող Ռաֆֆին ընդլայնեց հայ վիպասանության շրջանակը և գրեց «Ձալալ էդդին» վեպը (այն թարգմանված է եվրոպական շատ լեզուներով), որում նկարագրում է 1877-ի Հայաստանի վիճակը և ներկայացնում հայ ժողովրդի նահատակության սահմռկեցուցիչ պատկերը, այսինքն՝ այն, ինչ որ մենք սարսափով տեսանք, այն է՝ հարձակումները, գազանությունները, թշվառ նահատակներին, ցցի բարձրացվածներին, շիկացած երկաթով խարազանվածներին, այս բոլորը կա սույն գրքում: Վեպը գրեթե նույն տպավորությունն է թողնում, ինչ որ 1894-96 թթ. կոտորածների վայրերից գրված նամակները:

Այդ երկարատև ժամանակաշրջանի ընթացքում, երբ ազգային ոգին թմրած էր, ժողովրդական երգը, միշտ կենդանի ու վառ մնալով, ծաղկում ու զարգանում էր: Ոչ մի ժողովուրդ չունի հայկական երգերի նման երգեր՝ պանդուխտի աղիողորմ ու տառապալից սիրո երգեր:

Կազմավորվեց մի նոր սերունդ, որը ծանոթ էր հին Հայաստանի պատմությանը և ստացել էր ժամանակակից կրթություն: Նա բողոքեց կառավարության անարդարության և քրդերի անգթության դեմ: Ահա այս էր պատճառը, որ Ներսես պատրիարքը 1878-ին այստեղ, Բեռլինի վեհաժողով մի պատգամավորություն ուղարկեց և կարողացավ ձեռք բերել 61-րդ հոդվածը, որը պիտի ապահովեր Հայաստանի ապագան: Այս հոդվածի խոստումները երբեք չկատարվեցին. դեռևս հույսով այդ հոդվածին են դիմում Հայաստանի բոլոր բարեկամները:

Այնպես էր թվում, թե Եվրոպան հարստահարված ժողովրդի դատը իր սրտին մոտ էր ընդունել: Ավաղ, պետությունների ցուցաբերած շահագրգռությունը լուրջ չէր: Եվ ճշմարիտ շարժառիթը եղավ այն, որ հայերը համարձակվեցին Եվրոպային կոչ անել Թուրքիայի դեմ, որը սաստիկ կատաղեցրեց նրան:

Փակվեց Պոլսի հայկական թատրոնը: Արգելեցին հայոց պատմության ուսուցումը, ժողովները, տոները, դասախոսությունները, մամուլը ենթարկվեց ամենախիստ գրաքննության:

Բանտարկություններն ու հալածանքները վերսկսվեցին սարսափելի ու անխնա կերպով: Հայերի դեմ Համիդիե ալայը անունով հեծելագնդեր կազմվեցին:

Սուլթանն իր անունը տվեց այդ բաշիբոզուկներին և արձակեց իրենց դժբախտ դրացիների վրա, որպեսզի կողոպտեն ու սպանեն նրանց:

Եվ որովհետև շատ տեղերում հայերն սկսեցին ինքնապաշտպանվել այդ ավազակային հորդաներից, պատրվակ եղավ տանջանքներով ու կոտորածներով բնաջնջելու այդ «գյավուր» ժողովրդին:

Բեռլինի վեհաժողովում օսմանյան կառավարությունը հանձն էր առել 61-րդ հոդվածով անհրաժեշտ բարենորոգումներ մտցնել: Նա պատասխանատու էր հայերի ապահովության համար քրդերի հարձակումներից և պարբերաբար մյուս տերություններին պետք է տեղեկություններ տար՝ իր առաքելության մասին: Միջոցառումների իրագործման ընթացքը հսկելու իրավունքը տրված էր փաստաթուղթը ստորագրած պետություններին:

Տասնհինգ տարի շարունակ Թուրքիան դատարկ խոսքերով խաբեց Եվրոպային: Եվ փոխանակ բարենորոգումներ սկսելու, ընդհակառակը, որոշեց անգլիական, ֆրանսիական և ռուսական դեսպանատների նոտաներին պատասխանել համատարած կոտորածներ սարքելով: Եվ այդ գործողությունների մեջ քաջալերվեց Գերմանիայի հետ ունեցած «ամենաջերմ հարաբերություններից», ինչպես ասում է լավատեղյակ ճանապարհորդ, մի ջերմ հայրենասեր՝ Պոլ Ռոհրբախը:

Ամեն կողմից նեղն ընկած Թուրքիան ստիպված տեղի պիտի տար պետությունների համագործակցության առջև: Միայն Գերմանիայի հետ ունեցած բարեկամական հարաբերություններն էին, որ փախուստի դուռ էին բացում նրա համար: Պաշարումը, ինչից վախենում էր սուլթանը, տեղի չունեցավ: Նա կրկին դուրս պրծավ ցանցից և արձակ-համարձակ, սրի ու հրի սարսափով լռեցրեց հայերին:

Անուրանալի է այն փաստը, որ գերմանացիները՝ տղամարդ թե կին, ահավոր կոտորածներից հետո գթության ձեռք մեկնեցին: Գերմանական նվիրատվություններով բացվեցին որբանոցներ ու կրթարաններ:

Շատերին է հայտնի էդուարդ Բեռնշտայնի ճառը, և յուրաքանչյուրս գիտե, որ Լեփսիուսը ամեն ջանք թափեց Հայաստանի ճշգրիտ վիճակը իր հայրենակիցներին պարզորոշ ցույց տալու համար: Բայց առավել նշանակալից է այն փաստը, որով հրաման տրվեց նրան՝ լռել և չհիշել այդ մասին:

Սակայն, եթե գերմանական կայսրության և Թուրքիայի միջև սերտ հարաբերություններ չլինեին, ապա մեծագույն պաշտոնական ոճիրը, որ կատարվեց դարեր անց, տեղի չէր ունենա: Այդ պատճառով ամենից առաջ Գերմանիայում պետք է ստեղծել հայանպաստ կարծիք:

Հին իռլանդական մի առասպելում կինը սպանված ամուսնու արնաթաթախ վերարկուն նետում է իր այն ազգականի ուսերին, որը համաձայն չէր նրա դատը պաշտպանելու, որպեսզի դրանով վրիժառության դրդեր նրան:

Մեզանից ոչ ոք չի ձգտում վրիժառության:

Սակայն, եթե հնարավոր լիներ հայոց զոհերի արնաշաղախ վերարկուն գցել գերմանական ժողովրդի ուսերին, որպեսզի նա իր կառավարությանը ստիպեր ստանձնել այս փառավոր ազգից ողջ մնացածների ապահովությունն ու երաշխավորեր ազատությունը, ապա դա կլիներ մի հրաշալի և փառահեղ գործ:

ԷԴՈՒԱՐԴ ԲԵՌՆՇՏԱՅՆ ՀԱՅԵՐԻ ՏԱՌԱՊԱՆՔՆ ՈՒ ԵՎՐՈՊԱՆ

Գերմանացի նշանավոր քաղաքագետ, սոցիալ-դեմոկրատ ԷԴՈՒԱՐԴ ԲԵՌՆՇՏԱՅՆԸ (1850-1932) 1902 թ. հունիսի 26-ին Բեռլինում կարդացել է «Հայերի տառապանքն ու Եվրոպան» (հրատարակվել է 1906 թ.) դասախոսությունը, որով մասնավորապես բացահայտել է Եվրոպական պետությունների վերաբերմունքն ու թուրքերի վայրագ քաղաքականությունը թուրքահայաստանի նկատմամբ Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերից հետո:

Այն ժողովուրդը, որի պատմությունը կամ, մանավանդ, տառապանքը և ճակատագիրը զբաղեցնելու է մեզ այսօր, ապրում է մեզանից շատ հեռու, միջազգային մեծ ուղիներից կտրված, և համեմատաբար մինչև վերջերս շատերը չգիտեին նրա գոյության մասին: Իսկապես որ շատ քչերին է հայտնի եղել հայ ժողովրդի կյանքը և այն պայմանները, որոնց մեջ նա շարունակում էր պահպանել իր գոյությունը: Միայն մի քանի աշխարհագիրներ և պատմագիրներ էին հետաքրքրվում նրանց պատմությամբ, ինչպես նաև նրանք, ովքեր առհասարակ զբաղվում էին ընդհանուր քաղաքականությամբ:

Գուցե որոշ մարդիկ առարկեն, թե մեզանում ևս կան անհանդուրժելի բազմատեսակ կեղեքումներ ու տառապանքներ, և, ուրեմն, հարկ չկա գնալ շատ հեռուները փնտրելու կամ Փոքր Ասիայի կորսված գավառներում հետաքրքրվելու տեղի անցուդարձով: Ճիշտ է, բայց այն հալածանքներն ու անագորույն, գազանային բռնությունները, որոնց ամենօրյա զոհերն են եղել և են հայերը, այնքան բազմաբնույթ են, որ հարկավոր է բոլոր քաղաքակիրթ ազգերի միահամուռ բողոքը: Հետզհետե այդ սարսափները շարժեցին անգամ հետադեմ կառավարությունների խիղճը և նրանց ստիպեցին ուշադրություն դարձնել այս ժողովրդի վիճակի վրա: Բացի այդ, հայերի կյանքն ու ճակատագիրը մեզ հետաքրքրում է ուրիշ շատ նկատառումներով: Հայ ժողովուրդը կազմում է Արևելյան հարց կոչված հիմնահարցի միջուկը: Մի օր այդ հարցը ծանրորեն զբաղեցնելու է քաղաքակիրթ ժողովուրդներին, խռովելու է արևմտյան ազգերի խաղաղությունը, գժտություն է գցելու նրանց մեջ և դրանով ուշացնելու է քաղաքակրթության առաջընթացը:

Մարդասիրական նկատառումներից զատ հայ ժողովրդի ճակատագիրը մեզ պետք է զբաղեցնի մեկ այլ տեսանկյունից: Եվրոպան և Եվրոպայի հետ գերմանացիները հայ ժողովրդի հանդեպ պարտականություններ ունեն կատարելու: Մեր՝ գերմանական կառավարությունը, Եվրոպայի մյուս ազգերի հետ միասին, 1878-ի հուլիսին, ռուս-թուրքական վերջին պատերազմից հետո, Բեռլինի վեհա-

ժողովում որոշ պարտավորություններ հանձն առավ հայ ժողովրդի հանդեպ, և այսօր ժողովուրդները պատասխանատու են իրենց կառավարությունների գործերի համար: Երբ խնդիրը հիմնականում մարդասիրական ու արդարության պահանջներին է վերաբերում և կառավարությունները իրենց ստորագրած գրավոր խոստումները չեն կատարում, ժողովուրդները կարող են ազդու կոչ անել պարտաճանաչ լինելու:

Հալածված, հարստահարված և կոտորված հայերն իրենց հույսը դնում են Եվրոպայից եկած օգնության վրա. նրանք անհամբեր և անձկորեն նայում են մեծ տերությունների ու մեծ ազգերի բռնած դիրքին, որոնք Բեռլինի դաշնագրով պարտավոր են օգնել հայերին և պաշտպանել բռնություններից ու բնաջնջման վտանգից:

1877-78-ի ռուս-թուրքական պատերազմը հայտնի է ծեզ բոլորիդ: Այդ պատերազմը հզոր դիմադրությունից հետո վերջացավ թուրքերի պարտությամբ, Ռումանիո և սլավոն մյուս ժողովուրդների դաշնակից զորեղ Ռուսաստանի հաղթանակով: 1878 թ. մարտ ամսին Սան-Ստեֆանոյում Ռուսաստանը Թուրքիային կնքել տվեց մի պայմանագիր, որով Ռուսիան կարգվեց հայերի տեր և պաշտպան, այսինքն, եթե կարելի է այսպես ասել, Թուրքիան նրան իրավունք էր տալիս վերահսկելու և պաշտպանելու իրեն հպատակ քրիստոնյաների շահերը: Շատ արդարացի կասկածներ կարելի է հայտնել Ռուսաստանի՝ որպես պաշտպանի դերի վերաբերյալ, մանավանդ որ կարող է հարց ծագել. արդյոք Ռուսաստանն իրավունք ունի՞ ուրիշ ազգերի մեղադրանք ուղղել, քանի որ հենց ինքը հարստահարում է հպատակ ժողովուրդներին:

Այսօր մանավանդ կարելի է այդ հարցն առաջադրել, երբ կտեսնենք, թե Ռուսաստանը ինչեր է անում Ֆինլանդիայում և ինչպես կվարվի մյուս ժողովուրդների հանդեպ, որոնց հետ կնքել է հաշտության պայմանագիր, ինչպես է ոտնակոխ անում այդ դաշնագրությունները, ինչպես է ճզմում այդ ժողովուրդներին և ինչ բռնությամբ փորձում է նրանց ռուսացնել՝ գործի դնելով նույն միջոցները, որոնցով Թուրքիան փորձում է բնաջնջել Հայաստանում բնակվող ազգություններին: Սակայն այս խնդիրը առայժմ մեզ չի հետաքրքրում, որովհետև այժմ Հայկական հարցը ստացել է ուրիշ կերպարանք: Գոնե հայ ժողովրդին և Թուրքիայի քրիստոնյա մյուս ժողովուրդներին Ռուսաստանը իսկապես քանի-քանի անգամ պաշտպան է կանգնել: Թե հանուն ինչի է պաշտպանում, այդ ժողովուրդների համար միևնույն է: Երբ ժողովուրդները տառապում են, չեն հարցնում, թե ինչու են իրենց օգնության հասնում, նրանք իրենց ազատության մասին են մտածում:

1878-ին Եվրոպան, Անգլիայի պետական գործիչ Դիզրայելիի առաջարկությամբ, Սան-Ստեֆանոյի պայմանագրին հակառակվեց. Բեռլինի դաշնագրով Եվրոպան Ռուսաստանի ձեռքից վերցրեց հայերի վրա հսկելու դերը և ստանձնեց այդ պարտականությունները: Բեռլինի դաշնագիրը հայերին զրկեց մի այնպիսի պաշտպանից, որի վրա կարելի էր քիչ թե շատ հույս դնել, նրա տեղը զբաղեցրեց Եվրոպական համագործակցությունը, որը հայերի համար եղավ ոչ պիտանի պաշտպան, շատ ավելի անպիտան, քան Սան-Ստեֆանոյի պայմանագրով հաստատված Ռուսաստանը: Այս իրողությունը պետք է ընդունենք, եթե նույնիսկ լինենք ռուսական կառավարության հակառակորդը:

Արդ, եղան մարդիկ, որ ամբողջովին ուրացան Թուրքիայում քրիստոնյաների հարստահարությունները՝ մասնավորապես թուրք ժողովրդին վերագրելով ընտիր բարեմասնություններ: Նրանց կարծիքով, հալածանքները թեև բաներ են, իսկ խռովությունները ռուս գործակալների սադրանքն են, որի պատճառով

թուրքական կառավարությունը ստիպված խստություններ է կիրառում: Սխալ եզրակացություն է: Անշուշտ, Ռուսաստանը Թուրքիայում գործակալներ պահում է, վաղուց է, որ նա մտադրություն ունի գրավել Պոլիսը, որպեսզի տիրանա Սև և Միջերկրական ծովերին, դա կասկած չի հարուցում: Բայց միայն Ռուսաստանին նայելով եկեք մեր ուշադրությունը չհեռացնենք Թուրքիայի արարքներից: Այս հանրահավաքի կազմակերպիչները և ես անձամբ չունենք որևէ նախապաշարում թուրք ժողովրդի հանդեպ: Իբրև ազգ, ընդհակառակը, մենք միևնույն զգացմունքներն ենք տածում հայ և թուրք ժողովուրդների հանդեպ: Ուստի, երբ խոսում ենք Թուրքիայի մասին, մեր խոսքը չի վերաբերում թուրք ժողովրդին, այլ՝ թուրք պաշտոնյաներին, թուրքական կառավարությանը և Թուրքիայի ամբողջ կառավարչական համակարգին:

Եթե մարդ մոտիկից գիտի այդ համակարգը և հետևի նրա ընթացքին, մասնավորապես այս վերջին գարնանը, կգա այն համոզման, թե այդ համակարգը ամբողջովին փտած, ապականված է և աղետաբեր է Թուրքիայի բոլոր ժողովուրդների համար: Թուրքիայի բռնատիրությունը թույլ չի տալիս, որ ժողովուրդները շարունակեն զարգանալ, կան նահանգներ, որոնք կարող են դառնալ դրախտ (ինչպես մի քանի հայկական նահանգներ), բայց ետ են մնում քաղաքակրթությունից կամ բոլորովին ամայացած են: Չենք ժխտում, որ թուրք ժողովուրդը կարող է ունենալ մեծ յուրահատկություններ և շատ անգամ թերևս ցույց է տվել, բայց երևույթները մակերեսորեն չդատենք: Ի՞նչ են, սակայն, թուրք ժողովրդի գլխավոր բարեմասնությունները, եթե ոչ աշխարհակալ մի ժողովրդի հատկություններ՝ որոշ ազնվականություն և ինքնագոհության մեծ զգացում. բայց եթե ավելի մոտիկից դիտենք և քննենք, թե ինչ պայմաններում են այդ գծերը զարգացել, կտեսնենք, որ ամեն ինչ եղել է ի վնաս հպատակ ազգերի, որոնց վրա օսմանյան բռնակալությունը երկաթե լծի պես ծանրացել է և դեռ ծանրանում է:

Շատ է խոսվել օտար կրոնների հանդեպ Թուրքիայի ներողամտության մասին, և որպես ապացույց բերում են քրիստոնյա ժողովուրդներին, որոնք դարեր շարունակ թուրքական միապետության տակ պահել են իրենց կրոնը և գոյատևել: Սա ինքնըստինքյան ճիշտ է: Օսմանյան լծի տակ բալկանյան, ինչպես նաև փոքրասիական շատ ժողովուրդներ պահպանել են իրենց ազգությունը: Դա ունի իր պատճառը: Մի կողմից թուրքերը, իբրև հաղթող ժողովուրդ, բայց ոչ քաղաքակիրթ, անընդունակ են բառիս բուն իմաստով ծուլելու պարտված ժողովուրդներին, բացի այդ, սուլթանի կառավարությունը ընդհանրապես մնում է այն սկզբունքին, թե պետք է օտարներին ավելի շահագործել, քան թուրքերին:

Թուրքական բռնատիրությունը մինչև օրս եղել է մի տեսակ զինվորական կառավարություն: Թուրք ցեղը Թուրքիայում դեռևս կազմում է փոքրամասնություն և ապրում է պետական միջոցներով: Այդ բեռն ամբողջությամբ կծանրանա մյուս ժողովուրդների վրա, իբրև ոչ մահմեդականներ, որովհետև մինչև 19-րդ դարի կեսերը քրիստոնյաները Թուրքիայում չունեին միևնույն իրավունքները, ինչ թուրքերը: Քրիստոնյան իբր պետության անդամ գրեթե ոչինչ էր. չէր կարող զենք կրել և ավելի մեծ տուրք պետք է վճարեր, քան թուրքը: Թուրք կառավարությունը դրամական արժեզրկման սաստիկ տագնապից ելնելով՝ այդ ժողովուրդների վրա դնում էր հսկայական տուրքեր. այդ տագնապն ավելի էր սաստկանում 18-րդ դարի վերջին, երբ նրա հզորությունը թուլանում էր, ինչպես նաև երբ մեծանում էր իր կառավարման համակարգի դիմադրությունը եվրոպական քաղաքակրթության զարգացման նկատմամբ, երբ ծագում էին տնտեսական առավել բարդ իրավիճակներ, որոնց այդ պահին ընդունակ չէին ընտելանալու թուրքերը: Նման պայմաններում

թուրքական լուծը գնալով ավելի անտանելի էր դառնում հպատակ ժողովուրդների համար:

Հարկ է նկատի ունենալ երկրորդ իրողությունը: Թուրք ժողովրդի կրոնը մահմեդականությունն է, որի մասին Եվրոպան մեծ կարծիք ունի: Քրիստոնեության պատմության մեջ հայտնի բանավեճերից եզրակացնում են, որ մահմեդականությունն իր մեջ պարունակում է ավելի լավ պատվիրաններ և բոլոր տեսակետներով բարձր է քրիստոնեությունից: Մի բան, որ սխալ է: Չենք ուզում այստեղ ծանրանալ կրոնների փիլիսոփայության վրա, սակայն հարկ է նկատել հետևյալը:

Երբ ասվում է, թե մահմեդական կրոնը քաղաքակրթության համար նպաստավոր է, դրա տակ հասկացվում է միջին դարերի վերջում արաբական տիրապետության օրոք իսլամական քաղաքակրթության շրջանը: Այդ ժամանակ, չի կարելի ուրանալ, մահմեդական արաբները մեծ հայտնաբերումներ արեցին, բայց այդ շրջանն աշխարհի պատմության մեջ եղավ շատ կարճատև: Մահմեդականությունը իր սկզբնական շրջանում ուղղակի ժառանգորդն էր պտղոմեականների եգիպտական քաղաքակրթության: Մահմեդականությունն, անշուշտ, ունի ընտիր պատվիրաններ: Եթե կարդաք Ղուրանը, այնտեղ շատ լավ հատվածներ կգտնեք, որոնք բավական նմանություն ունեն քրիստոնեական կրոնի ժողովածուների մի շարք իմաստների հետ: Նույնիսկ կարծում եմ, թե ներկա որևէ քաղաքակիրթ ժողովուրդ մահմեդականություն ընդունելով կարող է նույն առաջադիմությունը ունենալ, ինչ քրիստոնեության օրոք: Կրոնները չունեն թվացյալ ամենակարող ազդեցությունը, թեև հանգամանքների բերմամբ կարող են նպաստել կամ կասեցնել քաղաքակրթության առաջընթացը:

Որոշ ժամանակ մահմեդականությունը քաղաքակրթությանը որևէ արգելք չհանդիսացավ, բայց հետագայում խոչընդոտ դարձավ մասնավորապես թուրքահպատակ երկրներում: Արաբիայում ծնունդ առած մահմեդականությունը կրոնն է մի վրանաբնակ ժողովրդի, որը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, իսկ առևտրական գործերով՝ անկանոն. մինչև օրս այդպես է Արևելքում և ընդհանրապես Աֆրիկայում: Մահմեդականությունը շատ հարմար է այդ ժողովրդի ապրելակերպին:

Հետևյալ իրողությունը ցույց է տալիս, թե կրոնական դոգմաները որքան նվազ ազդեցություն ունեն քաղաքակրթության վրա: Մահմեդականության մի գլխավոր դոգման, հավատո գլխավոր հանգանակներից մեկը նախախնամությունն է, այսինքն թե՝ յուրաքանչյուրի ճակատագիրը նախապես որոշված է, և ոչ ոք չի կարող իր ճակատագրից ազատվել: Թե ես ինչ կերպ պետք է մեռնեմ կամ ապրեմ, ըստ այդ վարդապետության, նախօրոք վճռված է, և ես պրծում չունեմ: Անխուսափելի ճակատագրի՝ ղըսմըթի հավատը մահմեդական օրենքի հիմքն է: Նմանօրինակ մի դոգմա կա կալվինականների մոտ, որը նույնպես հավատացնում է, թե մարդն ինչ էլ անի կամ չանի, նախապես որոշված է. օրինակ՝ եթե մեկը կալվինականություն է ընդունում, իրոք Աստծո շնորհիվ է և ոչ թե իր անձնական արժանիքը: Սակայն պետք է նկատել, որ Եվրոպայում կալվինականություն ընդունողները եղան ֆրանսիացի հյուկենները, շվեյցարացի նորաղանդավորները, հոլանդացիները, սկովրացիները և առհասարակ անգլիացիները: Բոլորն էլ ուժեղ և այդ ժամանակի ամենաքաղաքակիրթ ազգերն ու ժողովուրդներն են, որոնք ունեցել են վիթխարի զարգացում և եղան նորագույն շարժման հզոր ներկայացուցիչները: Արևելքում, ընդհակառակը, նույն գաղափարը հանգեց գրեթե ջլատող ճակատագրապաշտության: Բայց եթե ղըսմըթի գաղափարը, հանդերձյալ աշխարհի նյութապաշտ ըմբռնումով հանդերձ, ինչ-ինչ պարագաներում զինվորին պատերազմի դաշտում կարող է մղել արհամարհելու մահը, մյուս կողմից կարելի է ասել, որ այդ գաղափարը թուրք ժողովրդի միտքը խորապես թմրեցրել է: Կալվինականությունը բռնեց ուղղակի հեղափոխական ուղի: Հիմնականում նրանք սկսեցին վերանորոգումը. այդ նրանք էին, որ հետագայում մղեցին մեծ պատերազմներ քաղաքական ազատության համար: Եվրոպայում տիրող պայմանները շատ հեռու են Թուրքիայի կացությունից, այսինքն, առկա են հիմնականում տնտեսական տարբեր հարաբերություններ. ահա թե ինչու միևնույն գաղափարը գործեց հակառակ ուղղությամբ:

Մեր օրերում Թուրքիայում մահմեդականությունն իր սկզբունքներով և դոգմաներով քաղաքակրթությանն էապես չի նպաստում: Սակայն թուրք ժողովրդի համար սրանք շահեկան բաներ են: Մերը միսիոներների ժողով չէ: Թուրք ժողովրդի գործն է խորանալ իր դոգմաների մեջ և լուսավորվել:

Այժմ մեկ ուրիշ խնդիր: Թուրքիայում, ըստ մահմեդական սկզբունքների, չի կարելի հալածել գյավուրներին, բայց անթույլատրելի է, որ նրանք վայելեն նույն իրավունքները, ինչ մահմեդականները: Թուրքիան իր կազմությամբ միահեծան է, և կառավարությունը նույնքան բացարձակ է, որքան Ռուսաստանում: Մի ինքնակալություն է, որի ղեկավարը միանգամից և կայսր է, և խալիֆ: Սուլթանը միաժամանակ երկրի թե քաղաքական և թե կրոնական ղեկավարն է, իսկ տեսականորեն՝ հավատացյալների բացարձակ տերն է: Թուրքական քաղաքականության ընդհանուր ոգին այդ սկզբունքի մեջ է, և դա է բուն պատճառը, որ սուլթանը և իր քաղաքական ու կրոնական սատրապները Թուրքիայում առաջադիմական ամեն մի քաղաքականության ցույց են տալիս համառ դիմադրություն:

Այս տեսանկյունով ենք նայելու Թուրքիայում տիրող դրությանը: Թուրքիան իբրև պետություն 18-րդ դարից այս կողմ գնում է անկումից անկում: Լինելով իր ըմբռնմամբ ենիչերիների հետ մշտական կռիվների մեջ և հետզհետե աճող ռուսական սպառնալիքի տակ, Թուրքիան ստիպված էր տնտեսապես ճնշել ենթակա ժողովուրդներին: Մի ճնշում, որ բնականաբար առաջ պիտի բերեր դիմադրություն: Առաջինը հայերն էին, որ 19-րդ դարում համառ կռիվներ մղեցին Թուրքիայի դեմ: Բայց ի՞նչ արդյունքի հասցրեց այդ ազատամարտը: Եթե քննենք այդ հարցը, կտեսնենք, որ Թուրքիայում իշխանության գլուխ կանգնածները կազմ ու պատրաստ են, եթե ժողովուրդը ապստամբության փորձ անի ընդդեմ կառավարության: Եթե պատահի, որ ժողովրդի ծոցից ծագի ազատագրական որևէ լուրջ շարժում, իշխանությունները կարքեն արյունահեղություն և ապստամբներին ահաբեկող խմբական կոտորած: Թուրք զորապետները իրենց կանոնավոր և բաշիբոզուկ զորքերը կարձակեն մեծ մասամբ անզեն «շուն գյավուրների» դեմ և կգրգռեն սնոտիապաշտ խուժանի մոլեռանդությունը: Այսպես եղավ 1822-ին Քիոսի կոտորածի ժամանակ, երբ թուրք ծովակալի առաջնորդությամբ մոտ 2000 անզեն հույներ մորթոտվեցին սարսափելի անգթությամբ (հնչում են ներկաների պարսավանքի ձայները):

Այս կոտորածը իր անլուր խժդժություններով ամբողջ Եվրոպայում բարձրացրեց սոսկումի աղաղակ, հույների համար խանդավառվեցին, երբ նրանք դժնդակ կռիվներից հետո կարողացան ազատվել Թուրքիայի լծից: Եթե այստեղ Թուրքիայի մասին խոսում եմ առանց խնայելու, նորից եմ ասում, իմ խոսքը չի վերաբերում ամբողջ թուրք ժողովրդին: Նույնիսկ չեմ մոռանում, որ այդ երկրում միշտ էլ եղել են հեռատես պետական գործիչներ, ովքեր պահանջել են լուրջ բարեկարգումներ, և բարեսեր մարդիկ, ովքեր փորձել են բարելավել թուրքահպատակ ժողովուրդների նյութական և բարոյական կացությունը: Հանդես եկան մի

քանի լուսամիտ կառավարիչներ և սուլթաններ, ովքեր շատ լավ որոշումներ կայացրին, ինչպես 1839-ին Աբդուլ Մեջիդը, որի նախարարն էր Ռեշիդ փաշան. նա հրապարակեց Կյուլհանեի համբավավոր Խաթթը-շերիֆը, որով փորձեց Թուրքիայում հաստատել կրոնական հավասարություն: Եվրոպայում մենք բոլորս կրոնների հավասարության կողմնակից ենք, մենք բոլորս էլ համոզված ենք, որ դավանանքի համար ոչ ոք չի հալածվում: Բայց Արևելքում այլ բնույթ ունի կրոնական պաշտպանվածությունը և մեծ կարևորություն է տրված Խաթթը-շերիֆին: Այդ երկրներում շատ հաճախ կրոնը և ազգությունը նույնական են: Կրոնը թուրքական լծի տակ ցիրուցան ժողովուրդների ազգայնական կապն է. հենց դրա համար էլ այդ կապը ավելի շահեկան է, քան, նույնիսկ եվրոպական ժողովուրդների համար: Սոսկ անդենականի հավատք չէ, քրիստոնեականից առավել արժեքավոր և մանավանդ ազգային նկարագիրը անաղարտ պահելու զորեղ միջոց է:

Ահա այս տեսանկյունով պետք է նայենք Արևելքի կրոնական հարցերին, դրանք պետք է դիտել որպես մեր կրոնից տարբերվող երևույթի: Վերանորոգության շրջանի մեծ կռիվների ժամանակից կրոնը Եվրոպայի մեջ խաղաց նույն դերը, հաճախ կրոնական բարեփոխումը զուգակցեց քաղաքական և ազգային-ազատագրական շարժումների հետ: Մանավանդ կալվինական երկրներում հաճախ կրոնական բարենորոգումները միաժամանակ քաղաքական բարենորոգումներ էին: Ոչ մի տեղ ժողովուրդներն այնքան տոգորված չէին հանրապետական բուռն զգացմունքներով, որքան կալվինական երկրներում: 1642-49-ի անգլիական մեծ հեղափոխությունը, որ օրինակ հանդիսացավ ֆրանսիական մեծ հեղափոխության համար, կալվինական մտքի գործն ու վաստակն էր: Այն ժամանակ կալվինականությունը ոգևորվում էր Հին կտակարանով, որ ունի հանրապետական միտումներ և որի առաջին մարգարեները պայքարեցին հանրապետական գաղափարի համար: Կալվինականները իրենց քաղաքական իդեալը քաղում էին Հին կտակարանից և այն բացարձակ պաշտպանում էին կառավարություններից:

Թուրքիայում մի քանի սուլթաններ փորձեցին հաստատել կրոնական հավասարություն, բայց իրենց դեմ հանեցին մոլեռանդ ժողովրդին, ինչպես և տիրող դասակարգերի չկամությունը, կազմակերպված կղերականությանը, քաղաքական ու զինվորական պաշտոնյաների հզոր խմբերին, որոնց առաջ խորտակվեցին Թուրքիայի պետական այրերի ամենալավ մտահղացումները: Երբ բարենորոգումների փորձեր են արվել, հանդիպել են անգիտակից ու մոլեռանդ ամբոխից ոգեշնչված կղերականների, փաշաների ու իրենց ենթակաների ուժեղ դիմադրությանը: Նրանք այնպես էին անում, որ բարենորոգումները չգործադրվեին կամ ընթանային հակառակ ուղղությամբ: Ահա թե ինչ պատահեց 1860-ին Սիրիայում, մարոնիների քրիստոնյա ուժեղ, բայց փոքր աղանդի հետ: Նրանք փորձ արեցին դիմադրել իրենց ճզմող ճնշմանը, և իբրև պատասխան Լիբանանում տեղի ունեցավ մի կոտորած, որի ժամանակ սպանվեց 6000 քրիստոնյա, հակառակ Խաթթը-շերիֆի հրովարտակի, որ պիտի տարածեր կրոնական հավասարություն: Բնականաբար Եվրոպան միջամտեց, մասնավորապես Ֆրանսիան, որ ինքն իրեն համարում էր մարոնիների տիրական պաշտպանը: Բայց մեռելները հարություն չեն առնում, և դրությունը առաջվա պես շարունակվում է:

Փողի անդուլ և հարաճուն իշխանությունը Թուրքիային մղեց ավելի ծանրացնելու առանց այդ էլ ծանրացած իր լուծը բալկանյան ժողովուրդների ուսերին, ովքեր թուրք ժողովրդից առավել զարգացած են: Հենց 1870-ից սկսած սերբերը և ապա բուլղարները սկսեցին իրենց շարժումները: Սերբերը, որ Ղրիմի պատերազմից հետո ավելի մեծ անկախություն էին ձեռք բերել, ցանկանում էին ամ-

բողջովին կտրվել Թուրքիայից: Բուլղարները պահանջում էին առանձին ազգային կառավարություն ունենալու իրավունք, իհարկե, Թուրքիայի գերիշխանության տակ: Չի կարելի ասել, թե այդ ժողովուրդները ծայրահեղություններ չգործեցին. իրենց կրած տառապանքներից սրտերը վառված նրանք իրենց մեջ ապրող թուրքերին հաճախ վնասում էին: Ինչ էլ լինի, ինչ էլ պատահի, նման բաները պետք է կտրականապես դատապարտել: Եթե պարզենք, որ այսօր Կրետե կղզում վատ են վարվում թուրքերի հետ, մենք պետք է միջամտենք և պաշտպանենք նրանց, ինչպես ժամանակին արեցինք ի նպաստ կրետացիների:

Սակայն բուլղարների գործած վատ արարքները չնչին բան էին այն վրիժառությունների համեմատ, որ Թուրքիան գործեց իր հին սովորությամբ: 1876-ին թուրք բաշիբոզուկների ձեռքով մեծ կոտորած տեղի ունեցավ Բուլղարիայում: Մոտ 12-15000 բուլղարացի սպանվեց ահավոր և աներևակայելի գազանությամբ: Վրա հասավ ռուս-թուրքական պատերազմը, Թուրքիան պարտվեց, և բուլղարներն ունեցան վերջնական ազատագրության հույսը: Այս ժամանակ էր, որ Եվրոպան միջամտեց, և Անգլիայի թելադրանքով Բեռլինում գումարվեց վեհաժողով, որը կարգավորելու էր Թուրքիայի վիճակը եվրոպացիների տեսանկյունով: Եվրոպական այս միջամտությունը հայերի համար ոչ միայն օգտավետ չեղավ, այլև նույնիսկ (այսօր արդեն ընդունված կարծիք է) նրանց բազում վնասներ բերեց:

Եվրոպայի կարգավորման եղանակը, ինչպես վերջում ցույց տվեց պատմությունը, օգտակար չեղավ նաև եվրոպական սլավոնների և բալկանյան ժողովուրդների համար, ավելի արգելակեց նրանց զարգացումը, Սան-Ստեֆանոյի պայմանագրին հակառակ: Բեռլինի վեհաժողովը ծիծաղելի ձևով կարգավորեց բուլղարական հարցը: Բուլղարիայի մի մասը Թուրքիայի հովանու ներքո ձեռք բերեց որոշ ինքնավարություն. մի ուրիշ թուրքական նահանգ մնում էր իբրև թե ինքնավար, իսկ ամբողջ գավառներ պետք է ձեռք քաշեին վարչական ամեն ազատությունից: Այս բնակչությունը, թեև քաղաքականապես բաժանված, աշխարհագրորեն ապրում էր կողք-կողքի, հետևաբար նրանք իբրև ցեղակից տարրեր պիտի ձգտեին միության:

Եվրոպական համագործակցությունը ցույց տվեց իր անընդունակությունը՝ առկախ հարցերին տալով կիսակատար լուծումներ, ինչ որ շատ անգամ ավելի վատ է, քան ամբողջովին ձեռնպահ մնալը: Չէ՞ որ որոշ ժամանակ հետո մենք ականատես եղանք Բալկաններում ծագած խռովությանը:

Մեր օրերում դեռևս շարունակվում է այս անստույգ վիճակը: Բալկանները չեն խաղաղվում: Բեռլինի դաշնագրությունը կարողացավ ծառայել նաև Թուրքիայի շահերին: Ստիպված են ամեն տեղ զորք պահել, իսկ առանց այդ էլ հարկերի ահռելի ծանրությունը քամում է կործանվող երկիրը: Վերջնական ոչ մի բան որոշված չէ, ոչ ոք գոհ չէ, պատերազմի նոր օջախներ են ծագում, ահա Բեռլինի վեհաժողովի արդյունքը: Ինչ մասնավորապես վերաբերում է հայերին, ապա նրանց ըստ դաշնագրի բոլոր պետությունների հովանու տակ դնելով, առիթ է տրվել հետևյալ առակին՝ «Երբ խոհարարները բազմաթիվ են՝ կերակուրը ավերում են»:

Հայերի վրա շատ թանկ նստեց 1878 թվականի դիվանագիտական գլուխգործոցը, որի շնորհիվ այսօր նրանք կանգնած են բնաջնջման եզրին...

Վերադառնանք թուրքահայերի կացությանը:

Հայերը գրեթե ցրված են Թուրքիայով մեկ, բայց հիմնականում բնակվում են Հին Հայաստանում, որի մի մասը Ռուսաստանի ձեռքին է, մյուսը՝ Պարսկաստանի, իսկ մեծ մասը՝ Թուրքիայի: Ըստ թուրքական պաշտոնական վիճակագրության, Փոքր Ասիայում հայերի թիվը կազմում է 700-800 հազար, սակայն այս վիճա-

կագրությունը շատ հին է և հաճախ հիմնված է ծխերի վրա, բնակիչների միջին թվի համեմատ, որ համապատասխանում է թուրքական կյանքի պայմաններին:

Պետք է նկատի ունենալ, որ հայ ժողովրդի մեծ մասը ապրում է հեթանոս ժամանակները հիշեցնող պայմաններում. և հետո, մի ընտանիքի երեք-չորս պորտը ապրում է նույն հարկի տակ և ամեն տուն, միջին հաշվով ոչ թե 7-8 հոգուց է բաղկացած, ինչպես եվրոպական Թուրքիայում, այլ կրկնապատիկն է կամ եռապատիկը:

Հենվելով ավելի հեղինակավոր անձանց լուրջ հետազոտությունների վրա, ավելի հավանական է թվում, որ Թուրքահայաստանում կոտորածներից առաջ կար երկու միլիոնից ավելի հայ: Նրանք ապրում են քաղաքներում, որոնցից մի քանիսն ունեն մինչև 60000 բնակիչ. գոյության պայմանները նույնն են, ինչ մի դար առաջ եվրոպական քաղաքներում որոշ առանձնահատկություններով, որ արդյունք են բնակլիմայական տարբերությունների: Ժողովրդի մեծ մասը ապրում է գյուղերում, նահապետական կյանքով. հայ ժողովրդի 80 տոկոսը մանր գյուղացիներ կամ արհեստավորներ են:

Ուրեմն, կարելի է հերքել հայ ժողովրդի գոյության միջոցների և հասարակական դիրքի մասին տարածված առասպելները, թե հայերը միմիայն խոշոր վաճառականներ, գործավորներ և չգիտեմ էլ ինչ են:

Ճշմարիտ է, որ Հայաստանից դուրս, Թուրքիայում և մյուս երկրներում ապրող հայերի մեջ կան շատ վաճառականներ, երբեմն հանած-վարած վաճառականներ էլ կան, ինչպես հույների և ուրիշ ազգերի մեջ: Նմանօրինակ բաներ պատահում են գրեթե բոլոր մտաշխույժ ազգերի հետ, որոնք քաղաքականապես պետության մեջ երկրորդ կարգի քաղաքացիներ են: Սրա դասական օրինակը կա կրոնական մի աղանդի մեջ, որն ի սկզբանե որդեգրել է բարոյագիտական և գրեթե ընկերավարական սկզբունքներ. ահավասիկ՝ Անգլիայի քվեյքերները: Սրանք երբեք չեն երդվում, այդ պատճառով էլ Անգլիայում չէին կարող վարել որևէ ղեկավար պաշտոն, հենց իրենց սկզբունքն էլ արգելում էր ընդունել որևէ պաշտոն: Իրենց կրոնի խստությունն էլ արգելում էր զինվորական դառնալ, չէին կարող սովորել անգլիական համալսարաններում, որտեղ ընդունվում էին միայն նրանք, ովքեր դավանում էին պետական կրոնը. դրանից հետո անկարելի էր հետամուտ լինել ոչ արհեստի, ոչ պետական պաշտոնների, ոչ զինվորականության: Ուրեմն ինչ էր մնում անել: Նրանք, որ զարգացած էին ու աշխույժ մտքի տեր, դառնում էին վաճառական, և հաճախ ավելի լավ վաճառական, քան մյուսները: Ահա այդպես, քվեյքները, որոնք սկզբում ընչազուրկ աղանդ էին, այսօր կազմում են մի հարուստ ընկերակցություն:

Նման բաներ հաճախ են պատահել Արևելքում: Ժրաջան, բայց հարստահարված ժողովրդի տարրերը պետք է որևէ գործ անեին և բնականաբար անում էին վաճառականություն: Հայերի շրջանում վաճառականը կամ սեղանավորը շատ սահմանափակ խավ է կազմում: Ժողովրդի մեծ մասը գյուղացիներ են և նրանք են, որ Թուրքահայաստանում ավելի շատ են կեղեքվում, հալածվում, չարաչար կերպով շահագործվում և նրանց է, որ վերջապես օգնության ձեռք պետք է մեկնենք:

Եվրոպական միջամտության ճնշման տակ Թուրքիայի հրապարակած նիզամնամեները հայերին պետք է տային քաղաքացիական համահավասար իրավունքներ, բայց մյուս թուրք պաշտոնյաները իրենց ազդեցությամբ կասեցրին այդ քայլերը կամ դրանք շեղեցին հակառակ ուղղությամբ: Ըստ սահմանադրության հայերը պետք է թուրքերի հետ հավասար իրավունքներ ունենային, բայց իրականում այդպես չէ: Նախ որ նրանք ճզմված են Թուրքիայի սահմանած ա-

ներևակայելի ծանր հարկերի տակ: Ահա մի փոքր վկայություն հայ գյուղացու վճարած տուրքերի մասին: Կա երկու տեսակ տուրք. օրինական և կամայական: Չկարծեք, թե օրինական տուրքերը ունեն որոշ սահման, ոչ, նրանք ուզածիդ չափ ընդարձակվում են և դառնում առածգական բառիս ամենավատ իմաստով: Հայ գյուղացին, որովհետև մահմեդական չէ, նախ ենթակա է մի տեսակ գլխահարկի, որ տալիս են բանակից ազատվելու համար: Նման տուրքը առաջին պահ կարող է թվալ արդար, թեև զինվորական ծառայությունից ազատ լինելը ենթադրում է քաղաքական իրավունքի նվազում, և դրանից օգտվողները ունենում են ստորադաս վիճակ: Նույնիսկ նորածիններն են այդ հարկը վճարում: Զինվորական ծառայության փոխարեն գյուղացիները զբաղվում են ճանապարհաշինությամբ և բազմազան այլ գործերով, դրանից զատ էլ պետք է տուրք վճարեն:

Երկրորդը ընտանեկան տուրքն է, որ հաստատված է քաղաքների և գյուղերի համար, բաշխումը կատարվում է հայկական գյուղերի կամ քաղաքների թաղային խորհուրդների ձեռքով: Այնպես է արված, որ հարուստ ընտանիքները վճարեն նաև աղքատների փոխարեն, դրա շնորհիվ բոլորի մեջ գոյանում է խիստ համերաշխություն: Երբ տուրքը, որը նշանակված է պետության և պաշտոնյաների կարիքների համեմատ, անցնում է որոշակի սահմանը, կասեցնում է ամբողջ գյուղի բարգավաճումը:

Ապա գալիս են տուրքեր շինությունների և հողի համար: Այս վերջինը հիմնված է ոչ թե հողի արժեքի, այլ տարածքի վրա: Հետո գալիս է ոչխարի տուրքը, չնչին գին ունեցող մի գառի համար տարեկան պետք է վճարել 5 դահեկան: Այս տուրքերին, որոնք մի կերպ տանելի են, պետք է ավելացնել հողային արտադրության հարկը, որ ամբողջովին քամում է գյուղացուն, որովհետև ստիպված է հարկահանին տալ հողից քաղած ամբողջ բերքի մի մասը. ըստ օրենքի՝ գյուղացին պետք է տա ութից մեկը, բայց իրականն այն է, որ հայերից վերցնում են 20, 40, մինչև 60 տոկոս: Այսպիսի հսկայածավալ հարկերի տակ գյուղացին ընկնում է խորը հուսահատության մեջ:

Եթե գոնե այս հարկերը քիչ թե շատ կանոնակարգվեին, հայերն իրենց արևելյան համբերությամբ հոժարակամ կընդունեին, բայց, դժբախտաբար, այդպես չէ:

Թուրքիան բաժանված է վիլայեթների, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում է մի փաշա: Կառավարությունը, որ գրեթե դրամ չունի, փաշաներին չի վճարում, որոնք, ըստ հին սովորության, ցանկանում են և՛ աղայի պես ապրել, և՛ հարստանալ: Եթե տուրքերը չհասնեն ժամանակին, վալին անմիջապես նեղն է լծում իր պաշտոնյաներին, որոնք էլ իրենց հերթին ճնշում են աղքատ ժողովրդին:

Տասը տարին մեկ տուրքերն ավելանում են՝ նյութաքամ անելով հայ գեղջուկին: Նույնիսկ ամենահնազանդ մարդն իսկ կընդվզի, եթե տեսնի, որ իրեն փորձում են խեղդել: Այս պայմաններում անհնար է պահանջել հնազանդություն:

Հայերին արգելված է զենք կրել: Ինչպես ականատես եղանք, ժամանակի ընթացքում մոռանալով պապենական առաքինությունները, նրանք ձեռք բերեցին ստրկական սովորություններ, և այդպես էլ նրանց հետ վարվում են:

Այս նկարագրությամբ մենք դեռ չվերջացրինք հայահալած կեղեքումների շարքը: Քրդերը հայ գյուղացու վրա նայում են ինչպես կթան կովին: Երբ ծնում են հայերի կովերը, քրդերն ու չերքեզները դրանց մի մասը որպես տուրք խլում են: Մի ժամանակ նրանք որոշ չափ ու սահման պահում էին, գյուղացուց ամեն բան չէին խլում, հետագայում նրանք միշտ իրենց պետք էին գալու: Բայց այն օրվանից, երբ դրամը մուտք գործեց Արևելք, նրանք էլ ցանկացան փողատեր դառնալ և ծգտեցին ամեն ինչ պոկել հայ գյուղացուց: Քրդերն ու թուրքերը, ինչպես և չեր-

քեզները, հայերի վրա նայում են արհամարհանքով, իբրև ստորադաս ցեղի:

Այսպես, տարեցտարի ավելանում է հայ ժողովրդի հոգսն ու հարստահարությունը. եթե Պոլսի կառավարությունը նույնիսկ անկեղծորեն ցանկանա նրանց օգնության հասնել, բացարձակապես անկարող է ներկա կառավարման եղանակով:

Որևէ կառավարության կոչումն է կամք և ուժ՝ունենալ պաշտպանելու իր քաղաքացիների կյանքն ու սեփականությունը: Եթե մի կառավարություն չի կարող կատարել այս պարտականությունները, պետք է հրաժարական տա: Սուլթանի կառավարությունը գտնվում է այդ վիճակում, որովհետև մինչև օրս չի կարողացել պաշտպանել հայերին՝ քրդերի ու չերքեզների չարագործություններից, ինչպես նաև փաշաների և պաշտոնյաների կեղեքումներից ու հափշտակություններից:

Հակառակ այդ բոլորին, հայ ժողովուրդը հուսահատ վիճակում սիրտ առավ և, իր անկախության տենչը ամրապնդելով, միաբանվեց և որևէ այլ միջոց չտեսնելով, իր ազատությունն ինքն իր ձեռքով է կռում:

Չեմ կարող ասել, թե հայ հեղափոխականները պաշտոնյաների կամ նրանց արբանյակների դեմ բռնություն գործադրած չլինեն, բայց մեր նկարագրած պայմաններում նրանց արարքը այնքան մարդկային է ու ոչ պախարակելի: Նույն բանը լինելու է միշտ, երբ որևէ ժողովուրդ մատնված է կամայականության, երբ հարստահարվողը չի կարողանում իր իրավունքները լսելի դարձնել, այդպիսիներին մնում է դիմել բնական իրավունքի և կռվել ցանկացած զենքով: «Բանը բուրդ է» այն ժողովրդի, որը ծայրահեղ դժբախտությունից ազատվելու համար չի դիմի ամեն միջոցի:

1878-ի Բեռլինի դաշնագրով Եվրոպան հանձն է առել հսկել հայերի իրավունքների պահպանությունը: Ժամանակ առ ժամանակ իր ստորագրությունը դրած պետություններից մեկնումեկը Թուրքիային մեկ-երկու խրատ էր տալիս, որոնք ոչ մի ազդեցություն էլ չէին ունենում: Թուրքիան նման խրատներից խույս տալու ձևը շատ լավ էլ գիտեր: Նա միշտ նույն հորինվածքն է հրամցնում Եվրոպային. իբր թե հայերի խռովությունները արտերկրյա դրդիչների ձեռքի գործն են: Մյուս կողմից, պարբերաբար, իր ժողովրդի մոլեռանդությունն է գրգռում գյավուրների դեմ և կոտորածներով փորձում նրանց աչքը վախեցնել: Նման բան եղավ 1894-ի սեպտեմբերին Սասունում և նրա մերձակայքում, որտեղ 2000 հայեր գազանաբար մորթվեցին: Իրավիճակը այնքան զարհուրելի էր, թուրք մեծամեծ պաշտոնյաների մեղսակցությունը այնքան ակնհայտ, որ պետությունները հարկ համարեցին միջամտել: Իրադրությունը քննող պաշտոնյաները, որոնք ոչ խռովարարներ, ոչ էլ հայասերներ էին, այլ տարբեր պետությունների հյուպատոսներ և բարձրաստիճան գործիչներ, եկան այն համոզման, թե թուրք կառավարությունը, հանձին իր բարձր պաշտոնյաների, լիովին պատասխանատու է այդ բարբարոսությունների համար:

1895 թ. մայիսի 11-ին պետությունները թուրքական կառավարությանը ներկայացրին բարենորոգումների ծրագրի մի հուշագիր, որի արդարացի լինելը չհամարձակվեց ժխտել նույնիսկ սուլթանը: Այդ ծրագիրը ազգային կամ նահանգային անկախություն չէր պահանջել հայերի համար, այլ միմիայն նրանց իրավունքների պաշտպանություն և կառավարման արդարդատ կազմակերպում:

1895 թ. մայիսի 11-ի հուշագրի համաձայն, նահանգական և շրջանային վարչությունների, ինչպես նաև քաղաքապետարանների մեջ, որտեղ հայերը կազմում էին համեմատական մեծամասնություն, նրանք պիտի ունենային իրենց ներկայացուցիչը. այնպես որ, օրենքները, ինչքան էլ վատը լինեին, գոնե պիտի ունենային անկողմնակալ գործադրվելու երաշխավորություն: Վիլայեթների թիվը պիտի կրճատվեր: 1877-ին նրանց թիվը բազմապատկվեց շատ փաշաների պաշտոն տալու համար, և որքան փաշաները շատանան իրենց հյուրերով, այնքան ավելի ժողովրդի վրա ծանր կնստի: Թուրքահայաստանում վիլայեթը շատ ավելի փոքր է, քան Եվրոպայում. երկրի մի խավը և վալին ուզում են իշխանական կյանք վարել: Պետությունները հանձնարարել էին նվազեցնել կուսակալությունների թիվը, որպես երկրի շրջանների սահմանները վերաձևելու միջոց՝ ազգային համախմբումների համասեռ բնակությունը ապահովվելու համար:

1895 թ. հոկտեմբերի 22-ի երկարատև բանակցություններից հետո Թուրքիան խոստացավ (ամեն անգամ մեծամեծ խոստումներ է անում) կատարել հուշագրի առաջարկները: Սուլթանը Անգլիայի վարչապետին հայտնեց, որ հուշագիրը անհապաղ կիրագործվի, և մինչև իսկ երդման խոսք տվեց: Բայց ինչպե՞ս պահեց խոստումները իր պաշտոնյաների հետ միասին:

Կազմակերպվեցին սահմաններ չճանաչող և նախապես ծրագրված կոտորածներ հայերին ամբողջովին բնաջնջելու համար, ցեղասպանություն, որի նմանը երբեք չէր տեսել պատմությունը՝ իր մեծությամբ և դաժանությամբ:

Ամենևին կասկած չկա, որ այդ բարբարոսությունները խրախուսվում էին Պոլսի կողմից: Անշուշտ, ես անում եմ ծանր ամբաստանություն, սակայն իրազեկ և պատասխանատու պետական այրերը ապացուցեցին սուլթանի մեղսակցությունը, և արժանահավատ տեղեկագրերը հաստատեցին նրա պատասխանատվությունը, թե այս բոլոր անգթությունները նրա հրամանով և ցանկությամբ է իրագործված, և նույնիսկ մարդիկ նրան «մարդասպան» մեղմ տիտղոսը տվեցին: Այսպես ուրեմն, 1895 թ. հոկտեմբերի 22-ին մարդասպանը սկսեց իր գործը: Նույն օրը իրագործվեց Տրապիզոնի ջարդը, որտեղ սպանվեցին 600 քաղաքացի և 107 հոգի՝ շրջակա գյուղերից: Կառավարության պաշտոնյաները այդ ոճիրը թողեցին անպատիժ, և իրենց թույլատու ու քաջալերող ներկայությամբ կոտորածները դարձան ավելի ահռելի և հրեշային: Ահա մի քանի թվեր, որոնք մասնավոր անձանց կամ միսիոներների հիշատակածը չեն, այլ՝ հյուպատոսարանի պաշտոնյաների և քաղված են իրենց կառավարություններին դեսպանների ուղարկած տեղեկագրերից: Մեծ մասամբ անուններն իսկ տալով, բացեիբաց մեղադրում են սպաներին և պաշտոնյաներին, որոնք եղել են այդ սպանությունների և կողոպուտի ոչ միայն հաճոյակատար հանդիսատես, այլ մինչև անգամ կազմակերպիչներն ու առաջնորդները:

Այդ տեղեկագրի համաձայն, 1895 թ. հոկտեմբերի և նոյեմբերի զոհերի թիվը հետևյալն է. Էրզրում՝ 400, Բաբերդ՝ 1350, Բայազետ՝ 500, Բիթլիս՝ 800, Արաբկիր՝ 2800, Խարբերդ՝ 500, Մալաթիա՝ 3000, Սվազ՝ 1500, Տիգրանակերտ՝ 1200, Կյուրոս՝ 1000, Այնթապ՝ 1000, Մարաշ՝ 1350, Կեսարիա՝ 1000: Այս զոհերի մեծ մասն անզեն էր և բացարձակապես անկարող ինքնապաշտպանության:

Արդեն թվերը մեր ունկերում հնչում են կսկծագին, բայց եթե դուք կարդաք այս սպանությունների նկարագրությունները, եթե իմանաք, թե ինչ պայմաններում են սպանվել մարդիկ՝ կին, ծեր, մանուկ, ինչ անգթությամբ և ինչ գազանությամբ են գործված այդ ոճիրները և հոշոտումները, ինչ նրբանուրբ ու դիվային են (որին ընդունակ են միայն արևելցիները իրենց մոլեռանդությամբ ու մտաբորբոքմամբ), այնժամ պիտի հասկանաք անգլիացի ոչ զգայապաշտ պետական գործչին, որն ասել է, թե Հայաստանի կոտորածների տեսիլքը գիշերները խռովել է իր քունը: Մանուկներին ծնողների աչքի առաջ վայրագորեն խողխողել են, հղի կանանց արգանդները ամուսինների ներկայությամբ ճեղքել են և տղամարդկանց սպանելուց առաջ խայտառակ ձևով անդամահատել: Թերևս փախստականների

կամ ողջ մնացածների գրգռված երևակայությունը շատ բան է չափազանցում, բայց եթե կրճատենք այս բոլոր զրույցների կեսը կամ երեք քառորդը, դեռ կմնան մարդու մտքով չանցնող այնքան գազանություններ, որքան մարդկությունը չի տեսել ամբողջ պատմության ընթացքում: Բացի կոտորածների ժամանակ սպանվածներից, քանի՞ հազարավորներ վիրավորվեցին, քանի՞-քանիսը ցավագին մահ ընդունեց կարծեցյալ հիվանդություններից և բանտերում: Դրանից բացի, թուրք զինվորները, իրենց սպաների հետ խոսքերը մեկ արած, ավերեցին գյուղ ու քաղաք և դարձրին մոխիր:

Պատմության տարեգրությունների մեջ որքան կուզեք փնտրեցեք մի ամբողջ ժողովրդի դեմ գործած նման վայրագություններ, չեք գտնի ուրիշ օրինակ:

Ս. Բարդուղիմեոսի գիշերաջարդը, Տրոկետայի կոտորածը, 1792, 1848, 1871 թվերի արյունահեղ կռիվները, նույնիսկ՝ Քիոսի, Լիբանանի և Բուլղարիայի ջարդերը նսեմանում են սուլթանի պաշտոնյաների հովանավորությամբ կամ նրանց հրամանով Հայաստանում գործած արյունռուշտ վայրագությունների համեմատ, որոնք կատարվել են մի ժողովրդի դեմ, որի միակ հանցանքը եղել է կեղեքումներին հակառակվելը: Դրանք առաջացրել են նույնիսկ հետադեմ կառավարությունների զայրույթը և պետք է ընբռստացնեն զգացում ունեցող ամեն մի մարդու:

Արդ, եղան մարդիկ, որ նույնիսկ նման պարագաներում պաշտպանեցին Թուրքիային և այս բոլոր հաստատված գազանությունները համարեցին ծայրահեղ չափազանցություն: Երբ ես զայրանում էի, որ մեզանում ոչ ոք բողոքի ձայն չբարձրացրեց, լավագույն մի բարեկամիցս նամակ ստացա, որի գլխավոր կետերն էին. առաջին՝ թե Թուրքիայում հայեր չկան, երկրորդ՝ թե հայերը այնտեղ շատ երջանիկ էին, վերջապես՝ թե ապստամբողները ռուսական գործիչներ էին: Կան մարդիկ, որ Ռուսաստանի հանդեպ ունեցած արդար ատելությունից դրդված պաշտպան էին կանգնում Թուրքիային:

Թուրք կառավարությունն էլ իր հերթին բնականաբար փորձեց ուրանալ. չկարողացավ ժխտել կոտորածները, բայց հյուպատոսների տվյալների համեմատ ներկայացրեց ծիծաղելի թվեր:

Դոկտոր Յո. Լեփսիուսը իր «Հայաստան և Եվրոպա» գրքում համեմատում է Թուրքիայի պաշտոնական վիճակագրությունը և եվրոպականը: Այնտեղ, ուր եվրոպացի ճանապարհորդները կամ պաշտոնյաները սպանվածների թիվը հաշվում են 10000, սուլթանի պաշտոնյաները հազիվ 1000 են ներկայացնում: Թուրք կառավարությունն իր ակնոցի միջից է տեսնում զորքերի կատարած ջարդերը, աչքերը փակվում են, երբ ոճրի մեջ կա իր պատասխանատվությունը: Թուրք կառավարության ականջները խուլ են Հայաստանից Բոսֆոր հասած հուսահատական ճիչերի հանդեպ:

Եթե պետությունները սուլթանին չստիպեցին, որ իրագործի բարենորոգումները ինչպես խոստացել էր, պատճառն այն էր, որ Արևելքում հակադիր շահեր ունենալով՝ իրար չեզոքացնում էին: Ռուսաստանն այդ պահին անհարմար էր գտնում բռնել սուլթանի օձիքից, որովհետև իրեն ավելի հարմար էր, եթե Թուրքիան մնար այնպիսին, ինչպիսին կար, մյուս կողմից Անգլիան կռվի էր բռնված Հնդկաստանի հյուսիս-արևմտյան լեռնականների հետ:

1895 թվականին Անգլիայում ազատական կառավարության փոխարեն իշխանության գլուխ եկան պահպանողականները: Ազատական վարչակարգը դեմ էր Թուրքիայում կատարվող բռնություններին և բազմիցս սպառնաց սուլթանի դեմ խիստ միջոցներ ձեռնարկել: Իսկ պահպանողական վարչակարգը այնպես էր ցույց տալիս, թե ցանկանում է շարունակել նույն քաղաքականությունը, սակայն

այդ ժամանակ Հնդկաստանի լեռնագավառներում ծագեցին ապստամբություններ, որոնց դրդիչը մահմեդական միսիոներներն էին, և այն կարծիքն ստեղծվեց, թե այդ խռովություններում սուլթանի մատը խառն էր: Այնպես որ, եթե Անգլիան թուրքերին նեղեր, կարող էր Հնդկաստանի բոլոր մահմեդականներին հանել հանուն խալիֆաթի պաշտպանության: Ահա այս պատճառով էլ Անգլիայի կառավարությունը թույլ գտնվեց: Ֆրանսիան և Գերմանիան Ռուսաստանին համակիր էին: Սուլթանի կառավարության քեֆին քեֆ չէր գալիս: Բողոքն ընդունեց ամենամեծ անտարբերությամբ և հանդարտորեն շարունակեց կոտորել հայերին: Հետագա ամիսներին շատերին խմբովին թուրքացրին:

1896 թվականի օգոստոսին հեղափոխականները, պետությունների ուշադրությունը հայ ժողովրդի հուսահատ վիճակի վրա բևեռելու համար, հանդգնորեն գրավեցին Պոլսի օսմանյան բանկը՝ հույս ունենալով պետություններից կորզել բացահայտ խոստումներ: Նրանք հուսախաբվեցին և այդ ցույցի միակ արդյունքն այն եղավ, որ թուրքական կառավարությունը առիթ ունեցավ Պոլսի մեջ կոտորած սարքելու՝ իբրև վերջաբան հայկական ջարդերի: Այդ համայնաջարդի ժամանակ սպանվեց 6000 մարդ, չհաշված ծով նետվածները: Մայրաքաղաքի ամբողջ խուժանը թափվեց հայերի վրա՝ սուլթանի թիկնապահների գրգռմամբ և հովանավորությամբ: Այս ամենը կատարվեց եվրոպական դեսպանների աչքի առաջ, որոնք ոչինչ էլ չարեցին այդ ոճրի քավության համար: Նորից մի հուշագիր հրապարակեցին, կրկին շեշտեցին սուլթանի պատասխանատվությունը, բայց դրանից այն կողմ չանցան:

Պարզ է, որ կոտորածները, հրդեհները, կողոպուտը իրենցից հետո բերում են սով: Եվրոպայում շատ տեղերում եղան հանգանակություններ, բայց հավաքված նպաստները բավական չէին ամոքելու բոլոր թշվառներին, և հազարավոր հայեր մեռան սովից ու հիվանդություններից: Հուշագրեր փոխանակվեցին, բայց չէր զգացվում, որ ճնշում են գործադրում սուլթանի վրա՝ բարելավելու հայերի դրությունը:

Հայ ժողովուրդը ի վիճակի չէ որևէ բան անել, սպասում է Եվրոպայի օգնությանը: Պետությունները խոսք էին տվել պաշտպանել, բայց երբ չեն կատարում իրենց խոստումները, նշանակում է՝ նրանք բռնաբարում են դաշնագիրը: Եվ քանի որ կառավարությունները իրենց պարտականությունների մեջ թերանում են, հայերը ազգերի մեջ փնտրում են անհատ պաշտպանների՝ հուսալով, որ նրանց ձայնին կանսան կառավարությունները սուլթանի դեմ ազդու դիրք գրավելու համար: Արևելցիները տեղի են տալիս միայն ուժեղ կամքի առաջ, նրանք ունեն խույս տալու, ձգձգելու հազարումեկ միջոց և կարող են խոստանալ այն, ինչ երբեք չպիտի կատարեն, բայց տեղի են տալիս, երբ դիմացը ուժ են տեսնում:

Արդեն ասացի, թե Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանը ջարդեց Թուրքիայի վիզը: 1878 թվականի մարտը շատ ավելի օգտավետ էր հայերի համար, քան Բեռլինի դաշնագրությունը: Անգլիան միջամտեց Սան-Ստեֆանոյի պայմանագրին՝ Պիկոնսֆիլդի առաջնորդությամբ: Շատերն են հիացած այս գործիչով, բայց իմ կարծիքով, իբրև պետական այր նրան վերագրված համբավը չափազանցված է: Բոլոր պարագաներում ստույգն այն է, որ նրա ենթաքարտուղար լորդ Սոլզպրին, որն այսօր Անգլիայի արտաքին գործերի նախարարն է, և որը Բեռլինի վեհաժողովում և 1876-ին Պոլսի դեսպանախորհրդում ներկայացնում էր Անգլիան, ստիպված եղավ դատապարտել իր նախկին պետի գործունեությունը: Եվ Սոլզպրին թուրքիայի խայտառակությունների մասին ամբողջ ժողովրդին լուսավորելու բավական քաջություն ունեցավ: «1878-ին,- ասաց նա,- պետք է խոստովանել, գործեցինք մի սխալ. 1878-ին մեր փողը մի անպիտան ձիու վրա խա-

ղացինք», այսինքն՝ մի կառավարության, որը ոչ ուժ, ոչ էլ կամք ունի իր երկրում անելու այն բարենորոգումները, որոնց իրագործման համար իր աջակցությունը բերեց Անգլիան: Այնուամենայնիվ, Սոլզպրին մեզ հայտնի պատճառներով չի ուզում, որ Անգլիան մենակ բախվի Թուրքիայի հետ, նրա ցանկությունը պետությունների համերաշխ գործակցությունն էր: Բայց մինչև օրս նրանք չկարողացան միանալ գոնե սուլթանի հուշագրերը և խոստումներն ընդունելու համար: Այժմ Ռուսաստանը սուլթանին է պաշտպանում, իսկ Ֆրանսիան Արևելքի հարցում Ռուսաստանի հետ մի անցքից է նայում: Հուսանք, որ այս դրությունը վերջ կունենա:

Մի երկրորդ իրողություն: Արտասահմանի հայերը լուրեր ունեն, թե Սասունում և Մուշում նախապատրաստում են նոր կոտորածներ: Երբ քրդերը զինվում են, երբ կառավարությունը կանոնավոր զորք է ուղարկում հայկական նահանգներ՝ նշանակում է շուտով հրդեհ է բռնկվելու, և կոտորած է լինելու:

Այս պարագայում հայերի վիճակը վատ է. անզեն, դիմադրության չնչին միջոցներով, լոկ իրենց ուժերով անհնար է վտանգից զերծ մնալ: Բայց նրանք այս մասին հայտնում են արտասահման, և Փարիզի հայերը մի քանի քաղաքական անձերի դիմեցին, այդ թվում շատ ընկերավարների (Ժ. Ժորես, Ք. դը Պրեսանսե, Մ. Սանպա), խնդրելով, որ այս լուրերը հասցնեն Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին: Տելքասեն պատգամավորությանը բացեիբաց խոստացավ, որ ֆրանսիական կառավարությունը կոմիսարներ պիտի ուղարկի հսկելու ջարդի վախը մտած նահանգները: Այս առաջին միջոցը բացարձակ երաշխավորություն չէ հայերի համար քրդերի չարագործությունների դեմ, բայց գոնե ավելի մեծ պաշտպանություն ցույց տալու հույս է տալիս:

Այն, ինչ որ տեղի ունեցավ 1896-ին Պոլսում, դեսպանների աչքի առջև, բնականաբար կարող է կրկնվել 1902-ին այս հեռավոր նահանգներում, ֆրանսիական կոմիսարների ներկայությամբ: Բայց և այնպես, թերևս հավանական է, որ եվրոպացիների ներկայությունը կարողանա մի քիչ վախեցնել: Կասկած չկա, թե սուլթանի գործակալները մտադիր են վերանայել իրենց արյունոտ գործողությունները: Իհարկե, 95-96-ի կոտորածների նման ջարդեր չեն լինում ամեն տարի, բայց թուրք կառավարությունը այսօր ևեթ պատրաստ է երևում կրկնելու ամեն տեսակ չարագործություններ: Հայ ժողովուրդը, մեջքը ծուռ, չի կարող ինքնապաշտպանվել. թուրքը չոքել է նրա կոկորդին, ինչպես շղթայակապ մի շուն:

1900-ին Փարիզում գումարված միջազգային ընկերավարական համաժողովը մի որոշում ընդունեց, որտեղ իր խորին նողկանքը արտահայտելով Հայաստանի կոտորածների վերաբերյալ, դատապարտում է դրամատիրական կառավարություններին, որ ազդու կերպով չմիջամտեցին սուլթանի գործողություններին: Այն կոչ է անում Խորհրդարանի գործող պատգամավորներին անընդհատ ձայն բարձրացնել հայերի պաշտպանության համար պետությունների անտարբերության դեմ: Նաև Բրյուսելում Միջազգային ընկերավարական բյուրոն, բոլոր համախոհներին շրջաբերական ուղարկեց, համոզելով նրանց, որ շահագրգռվեն Հայաստանով և իրենց ձայնը լսելի դարձնեն նրա պաշտպանության ու օգնության համար:

Մարտի 3-ին գերմանական խորհրդարանում մեր բարեկամ Կ. Կրատնովերը խոսեց հայերի դրության մասին: Այս տեսանկյունից իր խիստ հրահանգչական և զուսպ ճառում նա կայսերական կառավարությունից խնդրեց, որ ջանքեր թափի և անտարբեր չմնա թուրքական անիրավությունների դեմ: Մի քանի տեսակետներով Կրատնովերը բավականաչափ հեռատես չեղավ. իր ճառում խառնեց ուրիշ հարցեր, որոնք Գերմանիայի արտաքին քաղաքականությունից դուրս էին: Նախարարապետը՝ կոմս Պյուլովը, այս առթիվ տվեց այն պարզ պատասխանը,

թե Գերմանիան չէր կարող ամեն տեղ Հանս Տամփֆի դերը խաղալ:

Մենք համաձայն ենք այս կետի հետ, այո, չենք ուզում, որ գերմանական կառավարությունը ամեն տեղ Հանս Տամփֆի դերը կատարի. մենք չենք պահանջում, որ ուրիշ երկրների բոլոր գործերում ցուցամոլություն անի: Բարեսիրությունը նախ տնից է սկսվում. բարի օրինակը, ինքնին, այսօր մեր իմացածների մեջ ամենալավ ջատագովն է: Սակայն Հայկական հարցի վերաբերյալ կա մի դաշնագիր, որը պետք է գործադրվի: Կոմս Պյուլովը շատ լավ գիտե, որ հայերը անկարող են իրենք իրենց պաշտպանել, և օգնությունը դրսից պետք է գա: Այն չընդունելու բուն պատճառը բոլորովին ուրիշ է: Գերմանիան այս որպեսիս աչքի առաջ մի շարք շահեր ունի Փոքր Ասիայում, և նրա ղեկավարները հարմար են գտնում բարեկամ մնալ սուլթանին:

Ձեզ ծանոթ են այդ շահերը. այն է՝ Անատոլիայի և Բաղդադի երկաթուղիները: Իբրև սոցիալիստ, մենք սկզբունքորեն որևէ առարկություն չունենք, որ Գերմանիան կառուցի այդ երկաթուղիները: Եթե գերմանական կապիտալը և աշխատուժը Փոքր Ասիայում երկաթուղիներ է կառուցում, ապա ապագայում շրջակա ժողովուրդների համար օգտակար կլինի: Բայց ինչու՞ հայ ժողովուրդը զոհ գնա այդ ձեռնարկներին: Ընդհակառակը, ինչու՞ նկատի չառնել Հայաստանի բարգավաճումը, եթե ուզում ենք, որ այս երկաթուղիները ապագայում հասույթի աղբյուր դառնան, և աշխույժ առևտուր ծաղկի այդ գծի վրա: Ճիշտ է, գլխավոր ուղին Հայաստանի միջով չէ, բայց շատ մոտիկ է անցնում:

Չէ, պետք չէ հայերին վախեցնել, թե գերմանական դրամագլուխը այս որպեսին շահեր ունի Փոքր Ասիայում: Մենք պարտավորություններ ենք ստանձնել հայերի նկատմամբ, որ պետք է կատարենք: Ավելորդ վախ է, թե սուլթանը երկաթուղիներից կհանի իր վրեժը, մանավանդ հիմա, երբ պետությունները թվում է, թե համաձայնության են գալիս ի նպաստ հայերի, և արևելցին, ինչպես ասացի, միայն ուժի առջև կխոնարհվի: Ուժը Եվրոպայի կողմն է, եթե Եվրոպան ուզենա, սուլթանը տանուլ կտա, կզիջի: Թող Հայաստանում կատարվի իրական բարենորոգում, և Թուրքիայում բոլոր ժողովուրդները կազատագրվեն, որովհետև հնարավոր չէ, որ Հայաստանում առկա իսկական բարենորոգումը չտարածվի Թուրքիայի մնացած մասի վրա:

Այժմ ավելի մոտիկից դիտենք Գերմանիայի պատմությունը և տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացնում նրա միջազգային դերը: Շատ է խոսվել Գերմանիայի փառավոր անցյալի մասին: Սակայն ի՞նչ կգտնենք այդ անցյալում, եթե գեղարվեստի և գիտության գործերը բացենք: Գերմանիան հենց միջնադարի սկզբից եղավ աշխարհակալների երկիր և սարսափելի էր բոլոր հարևան ազգերի համար: Ահա նրա փառավոր անցյալը: Չեմ ուզում քարկոծել նրան դրա համար, որովհետև մասամբ համապատասխանում էր դարի քաղաքակրթությանը. եթե աշխարհակալը Գերմանիան չլիներ, ուրիշ մի ազգ կլիներ: Ստույգ է, սակայն, որ Գերմանիան համարվում է կեղեքիչ, և ուրիշ ժողովուրդները ատելով ատում են նրան: Այս ատելությունը ավանդաբար գալիս է և շատ բուռն կերպով շարունակվում հարևան ժողովուրդների մեջ: Ինչպես, օրինակ, մեր ցեղակից գերման շվեյցարացիների մեջ, որոնց ժողովրդական հետևյալ ասացվածքը ցույց է տալիս այդ հին սովորությունը. շվեյցարացին երբ գնում է Գերմանիա, ասում է. «Ես գնում եմ Գերմանիա, օտար մի երկիր», իսկ երբ գնում է Ֆրանսիա, ասում է. «Ես գնում եմ Ֆրանսիա, մեր երկիրը»: Այս տարբերակումը հին հարաբերությունների պատմական հետևանքն է:

Եթե ուշադրությամբ ուսումնասիրենք 1848 թ. գերմանական հեղափոխութ-

յունը, կտեսնենք, որ նրա ձախողման պատճառը հիմնականում Գերմանիայի՝ դրսի երկրները իր ձեռքի տակ պահելու մղումն էր: Սա թույլ չտվեց գերմանացիներին անկեղծորեն ազատ դիրք բռնել և որպես ճշմարիտ ազատական ժողովուրդ վարվել. այս պարագայում իտալական և լեհական հարցերը ջլատիչ ազդեցություն ունեցան. վճռական քրոպեին ազատություն բառը սառում էր ամենաազատական գերմանացիների շուրթերին: Նույնը կատարվեց և 1859 թ., երբ ժողովուրդը ոտքի ելավ իր ազգային անկախությունը ձեռք բերելու համար: Նույնիսկ ծայրահեղ ձախակողմյան կարգերում կարծիքների անհամաձայնություն կար, թե ինչ դիրք էր բռնելու Գերմանիան ազատության այս կռվի մեջ, քանի որ ակնկալիքներ ուներ Իտալիայում: Ահա թե ինչու Գերմանիան քիչ է սիրված օտար երկրներում: Ամեն անգամ, երբ Գերմանիան խնդրում էր ուրիշ ժողովուրդներին իրեն սիրել, նրանք պատասխանում էին Գյոթեի «Պրոմեթևսին» բանաստեղծության բառերով.

Հարգում եմ քեզ.
Ինչի՞ համար:
Դու երբևէ ամոքե՞լ ես
Տառապանքները հարստահարվածների,
Դու երբևէ սրբե՞լ ես
Արցունքները տառապյալների:

Եվ սա շատ ճիշտ է գերմանացի ժողովրդի համար, մինչև իսկ մեր օրերում, և Կարլ Մարքսը իրավամբ գրում է. «Մենք, գերմանացիներս, բնավ հարազատ չենք ազատությանը, եթե ոչ նրա թաղման ժամանակ»:

Մենք ոչ մի ժողովրդի ազատարարը չենք: Մի անգամ, 1866-ին, Բիսմարկը Իտալիայից ետ վերցրեց արդեն ազատագրված Վենետիկը՝ Ավստրիան թուլացնելու նպատակով: Ընդհանրապես Գերմանիան միշտ խույս է տվել օտար երկրներում ազատագրական շարժումներին նպաստելուց:

Գերմանական պատմության վատ կողմն այն է, որ աշխարհակալի իր դիրքը նրան ստիպել է հաղթվողներին ձեռքի տակ պահել՝ երբեք գերմանացի ժողովրդին թույլ չտալով հասկանալ իր բուն ազատության արժեքը: Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը ազատագրել են ժողովուրդներ: Ռուսաստանը, ի պատիվ իր պատմության, ուներ ժողովուրդներ, որ երախտապարտ են նրան ասելու. «Մեր ազատությամբ քեզ ենք պարտական»: Մենք, գերմանացիներս, ի՞նչ կարող ենք ցույց տալ մյուս ազգերի արժեքների համեմատ: Ունե՞նք մի այնպիսի քաղաքական գործ, որով կարողանանք հպարտանալ:

Հայկական հարցը հարմար առիթ է խոսելու ի նպաստ մի ժողովրդի, որի դեմ շարունակվում է վայրենի բնաջնջումը: Հուսով եմ, որ այսօր ձեզնից յուրաքանչյուրը պիտի զգա, որ կա օգնության կարիքը, և հարկավոր է վերջ դնել Թուրքիայի անարգ վարչությանը: Ոչինչ չպետք է խեղդի մեր ձայնը:

Խոսքս մի փոքր ժողովրդի մասին է, որը մեզնից հեռու է գտնվում, և որի մեծամասնությունը քաղաքակրթության մեջ այնքան էլ առաջադեմ չէ՝ նրան ճնշող լծի հետևանքով: Սակայն դա պատճառ չէ մեզ և, մանավանդ, այս պահին նրանց համար, ովքեր պատկանում են սոցիալ-դեմոկրատ կուսակցությանը, որպեսզի չարտահայտենք մեր համակրանքը:

Սոցիալ-դեմոկրատները կռվի համար որպես նշանաբան ընտրել են քրիստոնեության հիմնադրի այն խոսքը, որ ասաց իր առաքյալներին. «Իսկապես, իսկապես եմ ձեզ ասում, մինչև որ այս փոքրերից մեկին չծառայեք, ինձ ծառայած

չեք լինի»: Այս հիանալի սկզբունքը դուք կգտնեք նորագույն քաղաքակրթության այն մեծ և ճշմարիտ մարդասիրական շարժման մեջ, որ է ֆրանսիական մեծ հեղափոխությունը:

1793 թ. մարդու իրավունքների հռչակագրում կա հետևյալ հոդվածը. որևէ հասարակության դեմ եղեռն է համարվում այն, երբ նրա անդամներից մեկի դեմ բռնություն է բանեցվում: Այս իմաստով, մենք այսօր ասում ենք՝ մարդկության և ազգերի դեմ ոճիր է՝ հարստահարել և ճնշել քաղաքակրթության ընդունակ մի ազգ: Եթե զոհված ժողովուրդը մեզանից հեռու է, հուժկու բողոքներ բարձրացնենք, որ մինչև Բարձր Դուռ լսվի և հզոր արձագանք գտնի կայսրության նախարարապետի մոտ: Պետք է վերջ դնել Թուրքիայի անարգ կառավարությանը, ձեռք մեկնել հայերին և երկրի երեսից ջնջել սուլթանական հալածանքները: Այս պատճառով խնդրում եմ ձեզ, որ բողոքի որոշման հավանությունը տաք և վավերացնենք (*երկարատև և բուռն ծափահարություններ*):

***

Հետևյալ որոշումը, մեկ ձայնով պակաս, միաձայն ընդունվեց ժողովի կողմից: Ժողովը հայտարարում է.

Թուրքահայ ժողովրդի տառապանքները, իր անկախության պայքարը կառավարության գործակալների կամայականության դեմ, իր ինքնապաշտպանությունը ընդդեմ կիսաքաղաքակիրթ լեռնականների անգութ բարբարոսությունների, պահանջում են բոլոր ազատասեր մարդկանց համակրանքը և, մանավանդ, քաղաքակիրթ աշխարհի բարոյական աջակցությունը, նրանց նկատմամբ, ովքեր կռվում են իրենց ազատագրության համար:

Ժողովը հայտնում է իր նողկանքը այն արյունահեղ ջարդերի համար, որոնց ասպարեզը այս վերջին տարիներին եղավ Հայաստանը և որոնք դեռ շարունակվում են: Ժողովը այդ սոսկալի անգթությունների պատասխանատվությունը նախ սուլթանի կառավարության վրա է դնում, ապա և՝ հավասարապես, մեծ պետությունների կառավարությունների վրա, որոնք 1878 թ. Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի համաձայն հանձն առան հսկելու հաստատված մի շարք միջոցառումներ և պիտի երաշխավորեին կյանքի գոյության որոշակի պայմանների ապահովությունը Հայաստանում:

ՍԵՐԳԵՅ ՍԱԶՈՆՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ՍԵՐԳԵՅ ՍԱԶՈՆՈՎԸ (1860-1927) պետական ականավոր գործիչ էր՝ դիվանագետ: 1910-1916 թթ. եղել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը, ակտիվորեն մասնակցել Թուրքահայաստանում Ռուսաստանի առաջադրած հայկական բարենորոգումների կենսագործմանը: Զգալի հետաքրքրություն են ներկայացնում Թուրքիայի այն ժամանակվա արտաքին քաղաքականության մասին նրա գնահատականներն ու հայացքները, որոնք շարադրել է իր «Հուշերում» և հրատարակել 1927-ին, Փարիզում: Ընթերցողին ենք ներկայացնում այդ գրքի «Հայկական բարենորոգումների հարցը» գլուխը:

Ըստ վաղուց հաստատված սովորության, գահ բարձրանալուց հետո, սուլթանը հատուկ պատվիրակություն էր ուղարկում Լիբադիա (Ղրիմ), երբ ռուսաց արքունիքը այնտեղ էր գնում հանգստանալու: Պատվիրակությունը ժամանում էր ողջունելու Նորին մեծություններին:

1914 թ. մայիսին սուլթան Մահմուդ 5-րդը այդ նպատակով Ղրիմ ուղարկեց ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին և գեներալ Իզեթ փաշային: Ես Ղրիմ կատարելիք իմ պաշտոնական ուղևորությունը հարմարեցրի պատվիրակության ժամանմանը Յալթա: Ղրիմում դեսպանների երկօրյա այցի ընթացքում գրեթե մշտապես լինում էի Թալեաթի և նրա օգնականի հետ: Դա ինձ հնարավորություն տվեց ինչ-որ չափով ճանաչել այդ մարդուն, որին ուռանց չափազանցության կարելի է համարել համաշխարհային պատմության մեծագույն ոճրագործներից մեկը:

Պատվիրակության ժամանման առիթով Յալթա եկած՝ Կոստանդնուպոլսում մեր դեսպան Մ. Ն. Գիրսը, որը երիտթուրքական կառավարության հետ ծառայողական կապերի բերումով լավ էր ճանաչում Թալեաթին, իսկ վերջինս ռազմական նախարար Էնվերի հետ միասին ամենաակնառու դերն էր խաղում այդ կառավարության կազմում, ինձ զգուշացրեց, որ ինչ էլ ասելու լինի Թալեաթը, նրա ոչ մի խոսքին չպետք է հավատալ: Այդ նախազգուշացումը լիովին համապատասխանում էր այն ամենին, ինչ այդ մարդու մասին ինձ հայտնի էր, ուստի ես ներքուստ ցանկանում էի, որ նա ինձ հետ ըստ հնարավորին քիչ հաղորդակցվի: Այնուամենայնիվ, նա այդ պահին ինձ հետաքրքրում էր նույնիսկ ավելի շատ, քան երբևէ, որովհետև ցանկանում էի թեկուզ մակերեսորեն ճանաչել այդ մարդուն. նրա բարի կամ չար կամքից կախված էր հայկական բարենորոգումների ճակատագիրը, որոնք մինչ այդ սկսվել էին ռուսաց կառավարության նախաձեռ-

նությամբ, և որոնց բարեհաջող կենսագործմանը ես եռանդագին մասնակցում էի:

Արտաքինով Թալեաթը ինձ թվաց զտարյուն թուրանցի: Նա միջահասակ, սակայն թիկնեղ էր, լայն, ոսկրոտ դեմքով, նեղ ճակատով, անհանգիստ, շագանակագույն, խելացի աչքերով, որոնք ջանում էին նայել բարեհամբույր հայացքով: Նրա օգնականը՝ Իզեթ փաշան, թվում էր, ավելի նվազ էր մտահոգված այն տպավորությամբ, որ ինքն օտարների վրա կթողներ իր համար նոր միջավայրում, և դրսևորում էր արևելցուն բնորոշ այն անտարբերությունը, որն ակամա իր օգտին է տրամադրում եվրոպացիներին:

Ես ներկա էի Լիբադիայի պալատում նրանց ընդունելությանը և ուշի-ուշով հետևում էի այն տպավորությանը, որ Թալեաթի վրա գործում էր Նիկոլայ Բ կայսեր վերին աստիճանի անբռնազբոս և հասարակ վարվելակերպը:

Իզեթի դեմքը ոչինչ չէր արտահայտում, բացի հանդարտ ակնածանքից, որը արևելցուն բնորոշ է երկրային մեծության հանդիպելիս: Թալեաթի կայտառ ու արտահայտիչ դեմքին ես նկատեցի շփոթվածության և երկչոտության հետքեր, որոնք կոպիտ ու անպատկառ մարդիկ հաճախ դրսևորում են, երբ հայտնվում են կիրթ հասարակության շրջապատում:

Պատասխանելով պատգամաբերների ողջույններին՝ թագավորը նրանց ասաց, որ ինքն ուրախ է իր մոտ տեսնելու Թուրքիայի հատուկ պատվիրակությանը, որ ինչպես սուլթանի, այնպես էլ թուրք ժողովրդի նկատմամբ ինքը տածում է բարեկամական զգացմունքներ և անկեղծորեն նրանց մաղթում է բարեկեցություն ու բարգավաճում: Թագավորն ավելացրեց, որ ինքը ոչինչ չի ակնկալում Թուրքիայի կառավարությունից և ցանկանում է միայն մի բան, որ նա տանտեր մնա իր սեփական տանը և իշխանությունը այնտեղ չհանձնի ուրիշի ձեռքը, որով, իր կարծիքով, լավագույնս կապահովվեին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության բարիդրացիական հարաբերությունները:

Այն ամենը, ինչ Մ. Գիրսը ինձ ասել ու գրել էր և ինչը ինձ այլ աղբյուրներից հայտնի էր Թալեաթի և նրա երիտթուրք կուսակիցների մասին, վկայում էր, որ, չնայած ոչ մի բարոյականությամբ չպատճառաբանված փառամոլությանը, երիտթուրքերը յուրօրինակ ջերմ հայրենասերներ էին և ձգտում էին դեն նետել պետական ինքնիշխանության այն բազում սահմանափակումները, որոնց հանգեցրել էր քրիստոնյա Եվրոպայի դեմ իրենց դարավոր պայքարը: Այս պատճառով ես կարող էի հուսալ, որ իմ բերած փաստարկները պատգամաբերների վրա որոշ տպավորություն կթողնեն, եթե, իհարկե, անձնական օգուտի նկատառումները նրանց դեռ վերջնականապես չէին կապել Գերմանիայի հետ: Արդյո՞ք դա արդեն տեղի էր ունեցել, թե ոչ, այն ժամանակ ինձ հայտնի չէր: Ես ունեի ևս մի ծանրակշիռ փաստարկ, որը մշտապես ազդում էր Թուրքիայի կառավարության վրա. Ռուսաստանի կողմից պատժամիջոցների սքողված սպառնալիքից թուրքերը աշխարհում ամենից շատ էին վախենում՝ Ռուսաստանին համարելով իրենց ամենավտանգավոր թշնամին: Սակայն այդ փաստարկին ես կարող էի դիմել չափազանց զգուշորեն, որովհետև դա մի երկսայրի զենք էր, որից հարկ էր լինում օգտվել միայն մեծագույն շրջահայացությամբ:

Բացի դրանից, տվյալ պահին, երբ արդեն տեղի էր ունեցել Գերմանիայի ու Թուրքիայի մերձեցումը, որն այնքան ցայտունորեն արտահայտվեց Լիմանի՝ Կոստանդնուպոլիս կատարած բանագնացությամբ, Թուրքիան աննախադեպ հիմք ուներ Գերմանիայի կառավարության աջակցությունն ստանալու Ռուսաստանի կողմից ուժգին ճնշում գործադրվելու դեպքում: Ինչպես վերևում նշվեց, մեր դաշնակիցներն ու բարեկամները հետամուտ էին իրենց սեփական նպա-

տակներին, և Կոստանդնուպոլսում մեզ համար հուսալի օգնականներ չէին: Այս պատճառով էլ մենք թուրքերի հարցում բոլորովին միայնակ էինք, մի բան, որը նրանք մեզանից վատ չգիտեին: Այսպիսով, մեր զինանոցում մնում էր միայն մեր համոզումը, որը թույլ զենք էր ամենուրեք, իսկ միանգամայն անպետք զենք՝ Արևելքում: Ավելի գործուն միջոցը, ինչպիսին էր մեր զորքերի ուժեղացումը Փոքր Ասիայի սահմանում, որի հենց միայն հնարավորությունը անհանգստացնում էր Ֆրանսիայի և Անգլիայի կառավարություններին, թեպետև դա ոչ մի հարձակողական նպատակ չէր հետապնդում, հարկավոր էր վերապահել ի դեպս այն բանակցությունների վերջնական ծախողման, որ մենք այդ ժամանակ Գերմանիայի մասնակցությամբ Թուրքիայի կառավարության հետ վարում էինք հայաբնակ վիլայեթներում բարենորոգումներ կատարելու շուրջը: Մեր զորքերի ուժեղացումը տվյալ դեպքում անընդունելի էր նաև այն պատճառով, որ Գերմանիայի դեմ ուղղված լինելով նույն չափով, ինչ չափով և Թուրքիայի դեմ, դա կարող էր հանգեցնել համաեվրոպական պատերազմի: Բացի դրանից, Գերմանիայի զինվորական բանագնացության հարցն արդեն դուրս էր եկել իր սանրման փուլից և մտել ծգծգվող փուլ:

Թալեաթի և Իզեթի հետ քաղաքական զրույցները դյուրին չէին: Նրանք մեծ ուշադրությամբ էին ունկնդրում մեզ, սակայն ոչ մի կարծիք չէին հայտնում, պատճառաբանելով, թե անտեղյակ են արտաքին քաղաքականությանը, որն իբր վարում է մեծ վեզիր Սաիդ-Հալիմը. վերջինս, ինչպես մենք գիտենք, բացարձակապես ոչ մի դեր չէր խաղում կառավարության մեջ, որտեղ ամեն ինչ որոշում էին բացառապես Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը: Միություն և առաջադիմություն կուսակցության պարագլուխները:

Հայկական բարենորոգումների կենսագործման խնդրում, որին ես շատ մեծ կարևորություն էի տալիս՝ նկատի ունենալով դրա բարենպաստ ավարտի նշանակությունը սահմանակից մեր մարզերի հայ բնակչության համար, Թալեաթը, ինչքան հնարավոր է, ավելի զուսպ և զգույշ էր, քան Գերմանիայի զինվորական միսիայի հարցում: Հայաբնակ վիլայեթներում բարենորոգումներ կատարելու՝ Ռուսաստանի նախաձեռնությունն առանձնապես տհաճ էր երիտթուրքերի կառավարությանը և դիտվում էր որպես Թուրքիայի պետական անկախության նկատմամբ օտարերկրյա իշխանության ոտնձգություն: Այս հարցում ես չէի կարող որևէ աջակցություն հուսալ երիտթուրքերի կողմից, որոնք իրենց հայ հայրենակիցների նկատմամբ համակված էին խոր ատելությամբ և անսահման կասկածամտությամբ: Միակ բանը, որին ցանկանում էի հասնել Թալեաթի հետ իմ զրույցներում, նրան համոզելն էր, որ հայկական հարցը մենք համարում ենք արտակարգ լուրջ հարց և հաստատ մտադիր ենք անդուլ հետևել այնպիսի բարենորոգումների իրականացմանը, որոնք թուրքահայերի համար երաշխավորեին մարդավայել գոյություն:

Չեմ կարող ասել՝ իմ տեսակետներն արդյո՞ք հարկ եղած ազդեցությունը գործեցին Թալեաթի վրա և նրան արդյո՞ք համոզեցին Ռուսաստանի հետ ընդհարումից խուսափելու անհրաժեշտությունը, ընդհարում, որին վաղ թե ուշ կհանգեցներ անկախ ազգային քաղաքականությունից հրաժարվելը և Բեռլինից եկող ցուցումներին լիովին ենթարկվելը: Այն կցկտուր պատասխանը, որ ես լսեցի նրանից, ինչում էր բարյացակամորեն և կարծես թե մատնանշում էր մեր նախազգուշացումները հաշվի առնելու ցանկությունը, բայց արդյո՞ք դա անկեղծ էր, թե ոչ՝ ինձ համար դժվար էր որոշել: Իմանալով այդ մարդու բարոյական կերպարը, ես մտածում էի, որ Ղրիմում մեր տեսակցության մթնոլորտում նրանից ճշմարտություն սպասելն ավելի դժվար էր, քան մի այլ պարագայում, երբ նա ոչ մի արտաքին կաշկանդանք չէր զգում և կարող էր լիովին ազատություն տալ այն ցինիկությանը, որը իր իսկ հայրենակիցների աչքին նրան դարձնում էր սարսափելի և ատելության առարկա: Հոգեբանական վերլուծության համար ժամանակ չկար, և Թալեաթի մասին ես ստիպված էի դատել այն պատրաստի տվյալներով, որ կարող էի ունենալ:

Ղրիմից մեկնելուց առաջ Թալեաթը և Իզեթը ինձ ու աշխատակիցներիս, ինչպես նաև թագավորի շքախմբից մի քանիսին, հրավիրեցին ճաշելու սուլթանական նավի վրա, որը խարիսխ էր գցել Յալթայի նավահանգստում: Ճաշի ժամանակ Թալեաթը նստած էր կողքիս և շատ քիչ էր խոսում, թվում էր, թե ինչ-որ բանով մտահոգ է: Ճաշի ավարտին, երբ ցանկանում էի ափ վերադառնալ, նա թեքվեց իմ կողմը և ցածր ձայնով, որպեսզի մյուսները չլսեն, ասաց. «Ես պետք է ձեզ լուրջ առաջարկություն անեմ: Ռուսաց կառավարությունը, արդյոք, չի՞ ցանկանում Թուրքիայի հետ դաշինք կնքել»: Ճիշտն ասած, այդ առաջարկությունն ինձ հանկարծակիի բերեց: Սակայն հաղթահարելով զարմանքս, հարցրեցի. «Դուք ինչու՞ Ձեր առաջարկությունը թողեցիք վերջին րոպեին, երբ առիթներ ունեիք այն անելու ավելի շուտ»: Թալեաթը պատասխանեց, որ քննարկելու համար, իհարկե, այլևս ժամանակ չի մնացել, և որ ինքը ուզում էր իմանալ, թե ես ինչպես կդիտեի նման դաշինքի հնարավորությունը: Ես նրան ասացի, որ Կոստանդնուպոլսում մեր դեսպանը երեք օրից կվերադառնա իր պաշտոնին՝ արված առաջարկությունը մանրամասնորեն քննարկելու հանձնարարականով: Ես սկզբունքորեն չմերժեցի, թեպետև մտածում էի, որ լուրջ բաների մասին անհրաժեշտ է լրջորեն խոսել: Թալեաթը ըստ երևույթին համաձայնեց:

Վերադառնալով տուն՝ նույն երեկոյան դեսպան Մ. Գիրսի հետ քննարկեցինք Թալեաթի անակնկալ առաջարկությունը:

Միխայիլ Նիկոլաևիչ Գիրսը, որը Կոստանդնուպոլսի յուրահատուկ քաղաքական մթնոլորտը յուրացրել էր Թուրքիայի մայրաքաղաքում երկար մնալուց հետո, չթաքցրեց իր զարմանքը ինչպես Թալեաթի բուն առաջարկության, այնպես էլ այն ձևի առթիվ, որով արվել էր այն: Միաժամանակ, նա ասաց, որ Թալեաթի առաջարկությունը, այնուամենայնիվ, չի կարելի անուշադրության մատնել: Նրան հայտնի էր, որ երիտթուրքական կուսակցության անդամների մեջ կային այնպիսիները, որոնք հակված էին իրենց երկրի անկախության ապահովումը փնտրել Ռուսաստանի հետ մերձենալու մեջ: Դրանք այն գործիչներն էին, ովքեր մյուսներից ավելի շատ էին անհանգստանում Գերմանիայից իրենց կառավարության հարաճուն կախումից և ուրախ կլինեին Թուրքիայի քաղաքականության նոր կողմնորոշման համար, դրանում տեսնելով իրենց վրա ծանրացող խնամակալությունից ազատվելու հնարավորությունը:

Թերևս Գիրսին թվում էր, որ Թալեաթը ևս ինչ-որ չափով սկսել է զգալ Գերմանիայի խնամակալության անհարմարությունը և Ռուսաստանի հետ մերձենալը կարող էր համարել այն թոթափելու միջոց: Այս ամենը նա ի վիճակի կլիներ իմանալ և ստուգել միայն Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո:

Թուրքիայի պատվիրակության մեկնումից հետո Ղրիմում մնացի մի քանի օր, ապա վերադարձա Պետրոգրադ՝ սպասելով Յալթայի առեղծվածի պարզաբանմանը Մ. Գիրսի կողմից: Երկու շաբաթ անց նրանից նամակ ստացա. պարզվեց, որ Ռուսաստանի հետ մերձեցման թեմայով խոսակցության շարունակմանը սպասելն իզուր էր: Երիտթուրքերի կառավարությունը, ըստ երևույթին, վախենալով իր նախաձեռնության համարձակությունից, որոշեց դուրս գալ այն ճանա-

պարհից, որ ուզում էր ընտրել Թալեաթը: Հնարավոր է նաև, որ Գերմանիայի դեսպանությունը, տեղեկանալով իր երկրի ազդեցության հակակշիռ գտնելու Թալեաթի փորձերի մասին, արագորեն վերջ տվեց նման հավակնություններին: Ինչևէ, ոչ մի տարակույս չի կարող լինել, և դա հաստատվում է նաև այլ աղբյուրներով, որ երիտթուրքերը ոչ առանց վարանման են իրենց ճակատագիրը վերջնականապես կապել Գերմանական կայսրության հետ, որի անպարտելի հզորությանը նրանց հավաստիացրել են Գերմանիայի դեսպան բարոն Վանգենհայմը և գեներալ Լիման Ֆոն Սանդերսի զինվորական միսիան: Այդ անպարտելիությանը թերևս էլ ավելի, եթե, իհարկե, ավելին հնարավոր է, անվարան էին հավատում ռազմական նախարարը՝ Էնվեր փաշան, որը Բեռլինում իր երկարատև ծառայության համար, որպես զինվորական գործակալ, վայելում էր կայսեր առանձնահատուկ բարեհաճությունը, ինչպես նաև Թուրքիայի զինվորական շրջանների գերմանամետ տարրերը:

Ինչպես արդեն նշվեց, Յալթայում, Թուրքիայի բանագնացների հետ իմ զրույցների ընթացքում նաև արծարծվում էր Փոքր Ասիայի հայաբնակ վիլայեթներում բարենորոգումներ կատարելու հարցը, որին, ինչպես Թալեաթին անկեղծորեն ասացի, ես մեծ նշանակություն էի տալիս: Այս խնդրում պարզորոշ կարելի էր նկատել Ռուսաստանի և Գերմանիայի քաղաքական ազդեցությունների պայքարը մերձարևելյան շահերի համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ Օսմանյան կայսրության սահմաններում հայերի ողբալի վիճակին և այդ քրիստոնյա ժողովրդի համար տանելի պայմաններ ստեղծելու նպատակով Ռուսաստանի կառավարության ձեռնարկած փորձերին:

Հրեաների նման, հայերը ևս իրենց տարածքը չունեցող ժողովրդի մի հազվադեպ և հակաբնական օրինակ են: Այն լեռնաշխարհը, որը կրում է Հայաստան պատմական անունը և որը եղել է հայ ժողովրդի բնօրրանը, վաղուց ի վեր նրա միայն մի ոչ մեծ հատվածի հայրենիքն է, իսկ այդ բնակչությունն էլ այժմ զգալիորեն ավելի է նվազել այն սոսկալի բնաջնջումից հետո, որին թուրքերը Փոքր Ասիայում հայերին ենթարկեցին 1914 թվականի մեծ պատերազմի ժամանակ: Սակայն այդ սարսափելի իրադարձություններից առաջ էլ, ոչ այսպես կոչված Ռուսահայաստանում, ոչ սահմանի մյուս կողմում գտնվող թուրքական վիլայեթներում հայերը ոչ մի տեղ, բացառությամբ մի քանի քաղաքների, բնակչության մեծամասնություն չէին կազմում:

Հայ ժողովրդի ողջ պատմությունը՝ սկսած 13-րդ դարից, երբ նա ընկավ նախ՝ սելջուկների, այնուհետև, հաջորդաբար, մոնղոլների և պարսիկների տիրապետության տակ, իսկ, վերջապես, 14-րդ դարում՝ Օսմանյան կայսրության ստեղծումից հետո, երբ սա թուրքերի կողմից ճորտական կախման հանձնվեց քուրդ ավատատերերին, մի բազմադարյան մարտիրոսագրություն է: Ինչքան էլ որ սարսափներով լեցուն է եղել թուրքերի տիրապետության տակ ընկած բոլոր քրիստոնյա ժողովուրդների պատմությունը, նրանցից ոչ մեկը չի կարող կրած տառապանքների առումով համեմատվել հայ ժողովրդի հետ, որի դրությունը ավելի ողբերգական էր, որովհետև նա ուրիշների նման չէր կարող հուսալ, թե երբևիցե կթոթափի բարբարոսների լուծը և իր գոյությունը կկազմակերպի ազգային անկախության սկզբունքներով: Դրա համար նրան պակասում էր գլխավոր պայմանը՝ սեփական տարածքը: Հայերի ավելի ծեռներեց մասը դիմել է պանդխտության և շուտով, աշխատասիրության ու բնատուր գործարարության շնորհիվ, իր համար, նույնիսկ հենց Թուրքիայի կայսրության սահմաններում, ստեղծել միանգամայն տանելի գոյապայմաններ, իսկ մի շարք դեպքերում՝ հասել հարստության և իշխանության: Համեմատաբար տանելի վիճակում էր հայ բնակչության այն մասը, որը բնակվում էր Թուրքիայի և Պարսկաստանի նկատմամբ տարված մի շարք հաղթանակներից հետո Ռուսաստանին միացված տարածքներում: Չնայած բյուրոկրատական անհանդուրժողության որոշ կարծատև դրսևորումներին, օրինակ՝ հայոց հոգևոր կառավարչության զրկումը եկեղեցապատկան ունեցվածքից՝ ելնելով հեղափոխական նպատակներով այն օգտագործելու կասկածանքից, հայերը Ռուսաստանի կայսրության ողջ տարածքում օգտվում էին օրենքի հովանավորությունից և քաղաքացիական բոլոր իրավունքներից: Ռուսաստանի հարավի շատ քաղաքներում նրանք հասան նյութական բարեկեցության բարձր աստիճանի և դրա շնորհիվ գերիշխող դիրք էին գրավում քաղաքային կառավարման բնագավառում, ինչը երբեմն հարուցում էր տեղացի մյուս ազգությունների անբարյացակամությունն ու նախանձը:

Վերն ասվածը պետք է միայն վերագրել օտար երկրներ տեղափոխված և օտար հպատակություն ընդունած հայ բնակչությանը կամ, լավագույն դեպքում, Թուրքիայում մնացած այն հայերին, որոնք այսպես, թե այնպես կարողացել էին հիմնավորվել Կոստանդնուպոլսում կամ Եվրոպական կամ էլ Ասիական Թուրքիայի մեկ այլ քաղաքում: Ընդ որում, նրանցից շատերը իրենց ունիթորական դավանանքի շնորհիվ օգտվում էին հռոմեական կաթոլիկադավան տերությունների դեսպանությունների և հյուպատոսությունների առանձնահատուկ հովանավորությունից, որն անգնահատելի առավելություն էր տալիս հայկական ջարդերի ժամանակ:

Իսկ ինչ վերաբերում էր գյուղական բնակչության զանգվածին, որը մնացել էր այսպես կոչված հայկական վիլայեթներում, ապա նրա վիճակը ոչ միայն չբարելավվեց ժամանակի ընթացքում կամ կառավարման և քաղաքական վարչակարգերի փոփոխությունից, այլև, ընդհակառակը, դառնում էր ավելի անտանելի: Որքան էլ հայերին համբերություն էր սովորեցրել իրենց դժվարին պատմությունը, այնուամենայնիվ, այդ համբերությունը այլևս սպառվում էր: Լիակատար իրավազրկությունը և թուրքական իշխանությունների ու քուրդ կալվածատերերի դաժան կամայականությունը, որոնց կալվածքներում հայերը կատարում էին ճորտ բանվորական ուժի պարտականություններ, բորբոքում էին նրանց հարաճուն դժգոհությունը, որից իրենց նպատակների համար, բնականաբար, օգտվում էին այդ անխնա ճնշումներից առաջացած ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հեղափոխական կազմակերպությունները: Մեր Անդրկովկասում գոյություն ունեին ամենախոշոր հեղափոխական կազմակերպության մի քանի խմբեր, կազմակերպություն, որը հայտնի էր Դաշնակցություն անվամբ, և որը իր գործակալներն ուներ Թուրքիայի բոլոր հայաբնակ կենտրոններում: Այդ կազմակերպության գործունեությունը հայտնի էր Ռուսաստանի կառավարությանը, որը անհանգստությամբ էր հետևում նրա զարգացմանը, քանի որ նրա հետքերը բազմիցս հայտնաբերվում էին Ռուսաստանի սահմաններում՝ մեր հայ բնակչության շրջանում, ընդ որում, երբեմն դժվար էր որոշել՝ Դաշնակցության քարոզչական գործունեությունը նախատեսված է Թուրքիա արտահանելու համար, թե հետապնդում էր ներքին նպատակներ:

Անդրկովկասին սահմանակից փոքրասիական վիլայեթներում հայերի ապրստամբությունը, որը մշտապես հնարավոր էր Թուրքիայի հայ բնակչության կյանքի անտանելի պայմանների պատճառով, սպառնում էր հրդեհ առաջացնել սահմանի նաև այս կողմում. բազմաթիվ և ունևոր ռուսահայերը իրենց ապստամբած եղբայրներին անպայման գործնական օգնություն կցուցաբերեին թուրք կեղեքիչների դեմ մղվող պայքարում:

Անդրկովկասը՝ խայտաբղետ ու անհնազանդ բնակչությամբ, իրենից ներկայացնում էր ամեն տեսակ խռովությունների ու հուզումների մի վտանգավոր միջավայր, և մեր տեղական վարչակազմը խիստ շահագրգռված էր, որ սահմանակից թուրքական մարզերը չդառնան զինված ապստամբության ռազմաբեմ: Հազիվ թե հարկ կա նշելու, որ նման ապստամբությունը կարող էր անխուսափելի պատերազմի հանգեցնել Ռուսաստանի և Թուրքիայի միջև, այսինքն՝ այնպիսի հետևանքների, որոնք ռուսաց կառավարությունը կցանկանար ամեն գնով կանխել:

Վերը նշվածից հետևում է, որ ոչ միայն մարդասիրական հետաքրքրությունն էր քրիստոնյա դժբախտ բնակչության նկատմամբ, որքան էլ ակնհայտ լիներ այդ հետաքրքրությունը, այլև մեր առավել անհանգիստ ծայրամասերից մեկում կարգուկանոն հաստատելու ցանկությունն էր, որ կայսերական կառավարությանը անհրաժեշտաբար մղեց ստանձնելու հայկական վիլայեթներում արմատական բարենորոգումների շուրջ բանակցությունների անցկացման նախաձեռնությունը: Նա այդ որոշմանը հանգեց՝ ունենալով տվյալ նպատակին հասնելու ամենամեծ շահագրգռությունը: Կար նաև մեկ այլ պատճառ. մեզ քաջ հայտնի էր, որ ուրիշ ոչ մի տերություն չէր ցանկանա վտանգել իր լավ հարաբերությունները Թուրքիայի հետ, հարուցելով Բարձր Դռան համար հայկական բարենորոգումների վաղուց ի վեր նախատեսված տհաճ հարցը: Ըստ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի Ռուսաստանը դրանց իրագործումը ստանձնել էր որպես պարտավորություն բոլոր մեծ տերությունների հանդեպ, և որոնք, այնուամենայնիվ, երբեք չէին իրագործվում Թուրքիայի ցանկացած կառավարությանը բնորոշ սովորությամբ:

Կանխատեսելով, որ մեր նախաձեռնությունը կառաջացնի Գերմանիայի կառավարության դժգոհությունը և կասկածանքը, որն ավելի ու ավելի էր ամրապնդում Թուրքիայի պաշտոնական հովանավորի դերը և չցանկանալով բարդացնել Ռուսաստանի ստանձնած առանց այն էլ դժվար խնդիրը, 1913-ի մայիսի վերջին ես Բեռլինում մեր դեսպան Ս. Ն. Սվերբեևին հանձնարարեցի Գերմանիայի կառավարությանը նախազգուշացնել բարենորոգումների նախաձեռնությունն ստանձնելու մեր որոշման մասին՝ այն նախագծերի ոգով, որոնք նախատեսված էին Բեռլինի դաշնագրով և Թուրքիայի ընդունած 1895 թվականի օրենքով, որը եռյակ համաձայնագիրն ստորագրած տերությունների ճնշմամբ ընդունվել էր հայերի զանգվածային ջարդերից հետո, և որի կատարմանը նրանք դեռևս ձեռնամուխ չէին եղել: Միաժամանակ դեսպան Սվերբեևը պետք է պարզաբաներ, որ մենք ձգտել ենք խուսափել այս հարցում եվրոպական կառավարությունների որևէ մրցակցությունից, իսկ մեծ տերությունների երկու խմբերը միավորել օսմանյան կայսրության հայ բնակչության դրությունը խելացի ու արդարացի բարեփոխումների միջոցով բարելավելու համար, և որ, իր վրա վերցնելով այդ գործի նախաձեռնությունը, Ռուսաստանի կառավարությունը մտադրություն չի ունեցել ոտնահարել Թուրքիայի իրավունքները, այլ ցանկացել է սեփական շահերից ելնելով, կանխել իր սահմաններում վտանգավոր բարդությունների հնարավորությունը:

Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները բարեհաճությամբ արձագանքեցին մեր առաջարկությանը և Կոստանդնուպոլսում իրենց ներկայացուցիչներին տվեցին համապատասխան հրահանգներ: Եռյակ դաշինքի տերությունների դեսպանները հավասարապես թույլտվություն ստացան ենթադրվող բարենորոգումների քննարկմանը մասնակցել հետևյալ պայմաններով.

1. Հայաստանի նկատմամբ սուլթանի գերագույն իրավունքների պահպանումը:
2. Թուրքիայի ներկայացուցչի մասնակցելը խորհրդակցություններին:

Տեղեկացնելով իր վրա դրված հանձնարարության կատարման մասին, մեր

դեսպանը ինձ հաղորդեց, որ Գերմանիայի արտաքին գործերի պետքարտուղարը համակրանքով չվերաբերվեց մեր մտադրությանը, թեպետև խոստովանեց, որ հայկական վիլայեթներից Բեռլին էլ են հասել տագնապալից տեղեկություններ, որոնք, սակայն, իր ասելով՝ միշտ չէ, որ կարող էին ստուգել: Բարենորոգումների հարցը նա համարում է կնճռոտ, պատճառաբանելով, թե իբր շատ դեպքերում հենց հայերն են եղել գրգռողը: Բացի դրանից, հոգալով հայերի մասին, տերությունները չպետք է անտեսեն քուրդ բնակչության շահերը: Պետքարտուղար Ֆոն-Յագոյի դժգոհությունը, մեր դեսպանի կարծիքով, բացատրվում է նրանով, որ Գերմանիայի կառավարությունը, ըստ երևույթին, ինքն էր մտադիր այս կամ այն ձևով հարուցել հայկական բարենորոգումների հարցը, ուստի և չէր կարող գոհ լինել՝ տեսնելով, որ մենք կանխել ենք իրենց: Հայերի նկատմամբ Գերմանիայի անսպասելի հետաքրքրասիրությունը բացատրվում է նրանով, որ, չցանկանալով թուրքերի դժգոհությունը բորբոքել չափից ավելի լայն բարենորոգումներով, Գերմանիայի կառավարությունը նաև դեմ չէր ձեռք բերել հայերի բարեհաճությունը, որոնք թուրքական կայսրությունում մշակութային և տնտեսական առումով ամենաարժեքավոր գործոններից մեկն էին:

Հայկական բարենորոգումների հարցում Ռուսաստանի նախաձեռնությունը անմիջապես փոխեց գերմանական դիվանագիտության վերաբերմունքը այդ խնդրի նկատմամբ: Սատարելու փոխարեն Գերմանիան սկսեց ցանկություն դրսևորել հայերին ապացուցելու, որ առանց Բեռլինի հենարանի նրանք երբեք չեն կարողանա հասնել իրենց ցանկությունների իրագործմանը, և սկսեց բարենորոգումների գործընթացն արգելակել նրանով, որ մեծ վեզիրին նախազգուշացրեց ռուսների առաջիկա նախաձեռնությունից:

Այնուամենայնիվ, Կոստանդնուպոլսում հավաքվեց հայկական բարենորոգումների մշակման համար միջազգային հանձնաժողովը: Մեր դեսպանի հանձնարարությամբ դեսպանության առաջին թարգման Ա. Մանդելշտամի կազմած այդ բարեփոխումների նախագիծը հունիսի վերջին ներկայացվեց հանձնաժողովի քննարկմանը, որը նիստի էր հավաքվել Եռի գյուղում՝ Ավստրո-Հունգարիայի դեսպանատանը: Ռուսաստանի նախագծի հիմնական թեզերը հանգում էին այն բանին, որ այսպես կոչված հայկական վեց վիլայեթներից կազմվում էր վարչական առումով մեկ նահանգ և հանձնվում էր մեծ տերությունների համաձայնությամբ 5 տարով սուլթանի նշանակած քրիստոնյա գեներալ-նահանգապետի կառավարմանը: Նրա ձեռքին կենտրոնացվում էր գործադիր ողջ իշխանությունը: Դրա հետ մեկտեղ, քրիստոնյաներից և մահմեդականներից հավասարապես ընտրված նահանգային ժողովը պետք է տեղական նշանակության հարցերում կատարեր օրենսդրական պարտականություններ: Ժողովի մշակած օրենքները հաստատվում կամ մերժվում էին սուլթանի իշխանության կողմից: Վիլայեթներում և սանջակներում նախատեսված էին վարչական խորհուրդներ, որոնք ընտրվում էին բնակչության կողմից, դարձյալ հավասար թվով քրիստոնյաներից և մահմեդականներից: Դավանանքի ազատության, արդարադատության, ժողովրդական կրթության, զինապարտության, հողատիրության ու հողօգտագործման, ինչպես նաև ֆինանսական հարկման տեսակետից Ռուսաստանի նախագիծը հայ բնակչությանը տալիս էր բավականաչափ երաշխիքներ, իսկ գլխավորն այն էր, որ բարենորոգումների բոլոր նշված կետերի կատարումն ապահովվում էր մեծ տերությունների վերահսկողությամբ:

Հանձնաժողովի հենց առաջին նիստում պարզ դարձավ, որ նրա աշխատանքն անհաջողության է դատապարտված: Ռուսաստանի նախագիծը, որը վա-

յելում էր Ֆրանսիայի ու Անգլիայի պաշտպանությունը, Գերմանիայի և նրա դաշնակից Ավստրո-Հունգարիայի պահանջների հետ համաձայնեցնելու անհնարինությունը հանձնաժողովի հետագա նիստերը հանգեցրին միայն լեզվակռիվների, որոնց ամլությունը ընկճող ազդեցություն էր գործում հանձնաժողովի այն անդամների վրա, ովքեր լրջորեն էին դիտում նրա խնդիրները և անկեղծորեն ցանկանում էին շուտափույթ բարենորոգումներով կանխել նոր արյունահեղության հնարավորությունը այդ դժբախտ երկրում, որի բուն բնակչությունը ենթարկվում էր անխնա բնաջնջման: Հանձնաժողովի նիստերի բացումից մի քանի օր անց մեր կառավարությունը Պետրոգրադում Գերմանիայի դեսպանության միջոցով ստացավ մի նոտա, որում Ռուսաստանի նախագծի էությունը ենթարկվում էր քննադատության և վերջում ցանկություն էր հայտնվում, որ տերությունները հայկական բարենորոգումների հարցում «հավասարապես հաշվի առնեն Թուրքիայի ցանկությունները»:

Ութերորդ նիստից հետո հանձնաժողովը ստիպված էր դադարեցնել իր աշխատանքները՝ դրանց շարունակումը համարելով աննպատակ: Ռուսաստանի նախագծի յուրաքանչյուր կետը հարուցում էր Գերմանիայի ներկայացուցչի ակներև բացասական վերաբերմունքը, և, ի վերջո, գերմանացիների մտցրած բազմաթիվ փոփոխություններից հետո, այն կորցրեց ամեն մի իմաստ և գործնական նշանակություն: Անհրաժեշտ էր վերջ դնել այդ անվայել կատակերգությանը:

Մինչդեռ հայկական վիլայեթներում կացությունը ոչ միայն չէր բարելավվում, այլև Կոստանդնուպոլսում մեծ տերությունների դեսպանները իրենց ենթակա հյուպատոսություններից ամեն օր տեղեկություններ էին ստանում թուրքերի և քրդերի կողմից հայ բնակչության նկատմամբ գործադրվող անվերջ բռնությունների մասին: Թուրքիայի կառավարությունը ոչ միայն չէր խոչընդոտում այդ անկարգությունները, այլև նույնիսկ խրախուսում էր, իսկ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանությունը այդ ամենին նայում էր անտարբերությամբ:

Միջազգային հանձնաժողովից ոչ մի արդյունքի չհասնելով՝ Ռուսաստանի կառավարությունը որոշեց չընկրկել այդ անհաջողության առջև, այլ ջանալ մեկ ուրիշ ճանապարհով հասնել Եվրոպայի վերահսկողությունը հայկական վիլայեթներում Թուրքիայի վարչակազմի գործողությունների նկատմամբ հաստատելու նպատակին: Արտաքին գործերի նախարարությունը Կոստանդնուպոլսում մեր դեսպանին հանձնարարեց անմիջապես Գերմանիայի դեսպան բարոն Վանգենհայմի հետ պայմանավորվել անհրաժեշտ բարենորոգումների ծրագրի համատեղ մշակման մասին: Այդպիսի ծրագիր, թեպետ ոչ առանց դժվարության, մշակվեց և հանգում էր հետևյալ հիմնական կետերին. մեկ մարզի փոխարեն հայկական վիլայեթները բաժանվում էին երկու մասի, յուրաքանչյուրի համար Բարձր Դռան կողմից նշանակելով տերությունների երաշխավորած օտարահպատակ քրիստոնյա ընդհանուր տեսուչ, որն իրավունք ուներ ետ կանչել բոլոր պաշտոնյաներին, ինքնուրույն նշանակումներ անել ստորին պաշտոններին և սուլթանի հաստատմանը թեկնածուներ ներկայացնել բարձրագույն վարչական ու դատական պաշտոնների համար: Յուրաքանչյուր մասում տեղացի հավասար թվով քրիստոնյաներից և մահմեդականներից ստեղծվում էր ժողով: Բոլոր պաշտոնները հավասարապես կիսվում էին քրիստոնյաների և մահմեդականների միջև: Տերություններին իրավունք էր վերապահվում բարենորոգումների կենսագործումը հսկել Կոստանդնուպոլսում՝ դեսպանների, իսկ տեղերում՝ հյուպատոսների միջոցով՝: Այս բոլոր կետերը մեծ տերությունների կողմից ընդունվեցին առանց առարկության:

** Ա. Մանդելշտամ, Le sort de l'Empire Ottoman. Payot. Paris, 1917.*

Թեպետև բարենորոգումների ծրագիրը զգալիորեն սահմանափակվեց գերմանա-ռուսական վերափոխումներից հետո, այնուամենայնիվ ընդունելի էր Ռուսաստանի կառավարության համար, որովհետև նույնիսկ այդ անկատար ձևով էապես բարելավում էր թուրքահպատակ հայերի կենցաղը: Իմ կարծիքով, Բարձր Դռան կողմից Թուրքիայի վարչակազմի գործողությունների նկատմամբ Եվրոպայի վերահսկողության սկզբունքի ճանաչումն ավելի էական էր, քան վարչական վերանորոգումների առանձին կետերի մանրամասն մշակումը, որոնց կենսագործումը, միևնույն է, նույնիսկ ամենաբարենպաստ հանգամանքներում վեճերի առիթ կտար տերությունների և Դռան միջև: Չնայած բոլոր թերություններին, կրճատված նախագիծը, այնուամենայնիվ, իր գլխավոր նպատակին համապատասխանում էր նրանով, որ նախատեսում էր վերջ տալ հայկական վիլայեթներում վերահսկողություն չունեցող բիրտ ու կաշառակեր վարչակազմի տեր ու տնօրինությանը և տեղական մահմեդական բնակչության սանձարձակ կամայականությանը: Այդ նախագիծը պետք է առաջին քայլը դառնար թշվառ քրիստոնյա բնակչության շրջանում քաղաքացիական կյանքի հիմնական սկզբունքների արմատավորման ճանապարհին, որը ստիպված էր եղել դարեր շարունակ ապրել հակառակ աստվածային ու մարդկային բոլոր օրենքների: Առաջին քայլին պետք է անխուսափելիորեն հաջորդեին հետագա քայլերը, և հայերի համար, վերջապես, կստեղծվեր ավելի խաղաղ և արտաքին բռնությունից զերծ կյանքի հնարավորությունը:

Մենք գիտենք, սակայն, որ, դժբախտաբար, այդ հնարավորությունը և ակնկալած ազատությունը ստանալու փոխարեն հայ ժողովուրդը մեծ պատերազմի հարուցած մարդկային աղետների ընդհանուր զանգվածին դեռ պետք է խառներ աննկարագրելի տառապանքների իր հսկայական բաժինը:

Չնայած բարենորոգումների համեստ նախագծի նկատմամբ Թուրքիայի կառավարության ցուցաբերած ակնհայտ դժկամությանը և այն բազմապիսի դժվարություններին ու խոչընդոտներին, որ նա հարուցում էր դրանց ընդունման դեմ, ռուսաց դիվանագիտությանը հաջողվեց կորզել Գերմանիայի կառավարության համաձայնությունը, և մեր գործերի հավատարմատար Գուլկևիչը կարողացավ հայկական բարենորոգումների գործը հասցնել ավարտին. 1914 թվականի սկզբին նա և մեծ վեզիրը ստորագրեցին մի համաձայնագիր, որի տեքստը այնուհետև հաղորդվեց բոլոր մեծ տերություններին:

Ասվածին մնում է ավելացնել հետևյալը. Գերմանիայի կառավարությունը, համաձայնելով, որ Կոստանդնուպոլսում Գերմանիայի և Ռուսաստանի դեսպանները համատեղ մշակեն բարենորոգումների նախագիծը, այնուհետև ոչ միայն ոչինչ չարեց, որպեսզի այդ նախագիծը պաշտպաներ Բարձր Դռան առջև, այլև, ընդհակառակը, բոլոր ուժերով արգելակում էր դրա ընդունմանը, և Գերմանիայի ներկայացուցչի ստորագրությունը բացակայում է 1914 թվականի փետրվարի 8-ի այն փաստաթղթում, որը ռուս-գերմանական նախագիծը դարձրեց ռուս-թուրքական համաձայնագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԵՈՐԳ ԲՐԱՆԴԵՍ
Հայաստանը և Եվրոպան
(արևելահայերենի վերածեց՝ *Գ. Թոսունյանը*) . 3

ԷԴՈՒԱՐԴ ԲԵՌՆԵՏԱՅՆ
Հայերի տառապանքն ու Եվրոպան
(թարգմ.՝ *Ա. Ինճիկյանը*) 11

ՍԵՐԳԵՅ ՍԱԶՈՆՈՎ
Հայկական բարենորոգումների հարցը
(*թարգմ.՝ Հ. Լիլոյանը*) 28

ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I

Խմբագիր՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Տպաքանակ՝ 500: Գինը՝ պայմանագրային: